



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

EDMC

Enterprise Development &
Market Competitiveness Project

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Զ Ե Կ ՈՒ Յ Ց

Համաձայն Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը»
ամենամյա զեկույցի մեթոդաբանության և հարցաշարի

ԵՐԵՎԱՆ 2013



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

EDMC

Enterprise Development &
Market Competitiveness Project

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց

Համաձայն Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը»
ամենամյա զեկույցի մեթոդաբանության և հարցաշարի



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

Այս զեկույցը սրեղծվել է Ամերիկայի Ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով: Ձեկույցի բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ	3
Ներածություն	4
Ստանդարտ դատական գործի (տիպային վեճի) ենթադրություններ – Առևտրային պայմանագրի կատարման ապահովումը դատարանների միջոցով	6
Տեղեկատվություն բարեփոխումների վերաբերյալ	8
Ա. Դատարաններ և կիրառման ենթակա օրենք	10
1. Իրավասու դատարան	10
2. Մասնագիտացված առևտրային դատարան	10
3. Դատավարական կանոններ	11
Բ. Ժամկետներ	12
1. Հայցադիմումի լրացում և ծանուցում	12
2. Դատավարություն և վճիռ	13
3. Վճռի կատարում	15
Գ. Ծախսեր	18
1. Տեղական իրավաբանական գրասենյակի կողմից գանձվող փաստաբանական միջին վճարներ	18
2. Դատական և փորձագետի ծախսեր	20
3. Վճռի կատարման ընդհանուր ծախսեր (ներառյալ վճռի գրանցում, հրապարակային վաճառքի կազմակերպում և այլն)	22
Դ. Հետազոտություն / թափանցիկություն	22
1. Դատավորների վարձատրություն	22
2. Դատավարության և վճռի հրապարակայնություն	23
Եզրակացություն	26
Առաջարկություններ	29
Հավելված 1	32
Հավելված 2	37

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՆ	ՀՀ Արդարադատության նախարարություն
ԱԺ	ՀՀ Ազգային ժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՓՊ	ՀՀ Փաստաբանների պալատ
Քաղ. օր.	ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք
Քաղ. դատ. օր.	ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք
Դատ. օր.	ՀՀ Դատական օրենսգիրք
«ԴԱՀԿ մասին» օրենք	«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք
ԴԱՀԿ ծառայություն	ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2002 թվականից Համաշխարհային Բանկը և Միջազգային ֆինանսական կորպորացիան նախաձեռնել են «Գործարարությամբ զբաղվելը» ծրագրի (այսուհետ՝ «Doing Business» ծրագիր) իրականացումը: Ծրագիրը բնութագրում է աշխարհի 185 երկրներում բիզնեսի իրականացման դյուրինության աստիճանը և խրախուսում է պետություններին կատարելու համապատասխան բարեփոխումներ առավել արդյունավետ կարգավորումների հասնելու ուղղությամբ, բարեփոխումների նպատակով առաջարկում է չափիչ ցուցիչներ, ինչպես նաև հնարավորություն է տալիս բիզնեսով հետաքրքրվող անձանց համապարփակ պատկերացում կազմելու յուրաքանչյուր երկրի գործարար միջավայրի մասին:

«Doing Business» ծրագիրը ներկայացնում է նաև ամենամյա մանրամասն զեկույց յուրաքանչյուր երկրի տնտեսության վերաբերյալ: Նշված զեկույցի մեջ ընդգրկվող ցուցիչների¹ բարելավման ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) վերջին տարիներին զգալի քայլեր կատարեց, ինչի արդյունքում ներկայումս զբաղեցնում է 32-րդ տեղը 185 պետությունների վարկանիշային աղյուսակում: Սակայն Հայաստանի արձանագրած արդյունքները չի կարելի բավարար համարել: Առավել ևս, կան այնպիսի ցուցիչներ, որոնք, առանձին վերցրած, շատ քիչ են փոխվել, քանի որ այդ ցուցիչներով բնութագրվող համապատասխան ոլորտները բարեփոխումների գրեթե չեն ենթարկվել կամ աննշան չափով են ենթարկվել: Դրանց թվում է «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչը, որն առանձնակիորեն բացահայտում է տվյալ երկրում առևտրային բնույթի պայմանագրերի խախտման դեպքում ծագած առևտրային վեճերը դատարանների միջոցով լուծելու և պայմանագրի կատարման գործընթացի դյուրինության աստիճանը: Այդ գործընթացը բնութագրվում է երեք հիմնական գործոններով՝ Ժամանակ, ծախսեր և ընթացակարգերի թիվ: Ներկայումս «Գործարարությամբ զբաղվելը 2013» զեկույցի համաձայն՝ Հայաստանը «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչի վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 91-րդ տեղը 185 երկրների շարքում: Ժամանակի ընդհանուր տևողությունը 440 օր է: Ծախսերը կազմում են առևտրային վեճով պահանջի 19 տոկոսը, իսկ ընթացակարգային քայլերը թվով 49-ն են²: Այս տվյալներն անփոփոխ են մնացել 2009թ.-ից և արդեն շուրջ 4 տարի է, ինչ այդ ցուցիչը չի բարելավվել:

Սույն ուսումնասիրությունը նվիրված է Հայաստանում առևտրային բնույթ կրող պայմանագրերի կատարումը դատարանների միջոցով ապահովելու վերաբերյալ ներկայիս օրենսդրության և պրակտիկայի ներկայացմանը, ներառյալ պայմանագրի խախտման հետևանքով ծագած վեճը քննող իրավասու դատարանները, դատարան դիմելը, դատավարության ընթացակարգը և տևողությունը, դատական ակտի հարկադիր կատարման կարգը և տևողությունը, դատական (այդ թվում՝ փաստաբանի վարձատրության) ծախսերը, դատական ակտի կատարման ծախսերը և այլն: Ուսումնասիրությունը կատարված է «Doing Business» ծրագրի կողմից «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչի համար մշակված մեթոդաբանության և հարցաշարի համաձայն առաջարկվող ստանդարտ առևտրային վեճի օրինակով:

Առանձին հավելվածով (Հավելված 1) ներկայացվում են նաև «Doing Business» ծրագրի կողմից «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչի համար մշակված ընթացակարգային քայլերը, որոնք ներառում են Հայաստանում տիպային վեճի ծագումից մինչև վճռի կատարումն անհրաժեշտ ընթացակարգային քայլերը և դրանց թիվը:

«Գործարարությամբ զբաղվելը 2013» զեկույցում ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել են Հայաստանի վերաբերյալ իրապարակված տվյալների և ներկայումս առկա փաստացի վիճակի որոշ տարբերություններ, ինչպես նաև կատարվել են եզրահանգումներ և առաջարկություններ հնարավոր բարեփոխումների և «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչի վարկանիշային աղյուսակում Հայաստանի դիրքը բարելավելու ուղղությամբ:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են պայմանագրերի կատարման ապահովմանը և դատական համակարգին առնչվող բոլոր իրավական ակտերը: Հատուկ ուշադրություն է դարձվել ոլորտում նախատեսվող բարեփոխումներին և գործող ռազմավարություններին: Ընդհանուր պատկերացում կազմելու համար քննարկումներ են անցկացվել նաև մի շարք փաստաբանների և առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

1 ԴՔ ամենամյա զեկույցի համար պետության տնտեսությունը բնութագրող ցուցանիշները թվով 11-ն են՝
1. Ընկերության հիմնադրում
2. Շինարարական թույլտվությունների ստացում
3. Էլեկտրականության միացում
4. Սեփականության գրանցում
5. Վարկերի ստացում
6. Ներդրողների պաշտպանություն
7. Հարկերի վճարում
8. Արտաքին առևտուր
9. Պայմանագրերի կատարման ապահովում
10. Ձեռնարկության փակում/լուծարում
11. Աշխատանքային հարաբերությունների կարգավորում

Առավել մանրամասն տե՛ս <http://www.doingbusiness.org/about-us>; <http://www.doingbusiness.org/~media/GIABW/Doing%20Business/Documents/Annual-Reports/English/DB13-Chapters/About-Doing-Business.pdf>

2 «Գործարարությամբ զբաղվելը 2013, Հայաստան» զեկույցը տե՛ս <http://doingbusiness.org/Reports/~media/GIABW/Doing%20Business/Documents/Profiles/Country/ARM.pdf>; «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչի վերաբերյալ տեղեկությունները տե՛ս զեկույցի 85-րդ էջում:

Հավաքված տեղեկություններն ամփոփվել և հետագայում ներկայացվել են մայիսի 23-ին, 30-ին և 31-ին անցկացված երեք սեմինարների ընթացքում, որոնց մասնակցել են շահագրգիռ պետական մարմինների, մասնավոր կազմակերպությունների, բիզնես և իրավաբանական խորհրդատվություն իրականացնող տարբեր ընկերությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև անհատ փաստաբաններ, իրավաբաններ, տնտեսագետներ, ֆինանսիստներ և այլք: Սեմինարների ընթացքում հակիրճ ներկայացվել են ՀՀ-ի վերաբերյալ «Գործարարությամբ զբաղվելը 2013» զեկույցի «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչի արդի վիճակը, կատարված ուսումնասիրության արդյունքները, առկա խնդիրները, ինչպես նաև ոլորտում առաջարկվող բարեփոխումները: Սեմինարներն մասնակիցների հետ ուղեկցվել են կատարված հետազոտության վերաբերյալ ակտիվ քննարկումներով: Դրանց ընթացքում արվել են նաև մի շարք առաջարկություններ, որոնք ներկայացված են սույն զեկույցի Հավելված 2-ում:

ՍՏԱՆԴԱՐՏ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ (ՏԻՊԱՅԻՆ ՎԵՃԻՆ) ԱՌՆՉՎՈՂ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ³

Առևտրային պայմանագրի կատարման ապահովումը դատարանների միջոցով

«Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչը բնութագրելու համար «Doing Business» ծրագրի կողմից մշակվել և առաջարկվել է ստանդարտ առևտրային վեճի մի դեպք, որի օրինակով հնարավոր է բացահայտել ուսումնասիրվող տնտեսությունում առևտրային պայմանագրերի կատարման դյուրինության աստիճանը: Դեպքը ներկայացված է *ապրանքների առք ու վաճառքի պայմանագրի* օրինակով:

Վաճառողը և գնորդը՝ երկուսն էլ տեղական ընկերություններ են: Վաճառողը համաձայնում է վաճառել, իսկ գնորդը համաձայնում է գնել պատվերով պատրաստված ապրանքները, որոնց արժեքը կազմում է **2,724,318⁴** ՀՀ դրամ: Ապրանքների մատակարարման ժամանակ գնորդը հայտարարում է, թե ապրանքների որակը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, և հրաժարվում է վճարել: Վաճառողը առարկում է, որ ապրանքները համապատասխան որակի են և պահանջում է վճարել պայմանագրով սահմանված գինը: Ապրանքները պատրաստված են պատվերով՝ հատուկ գնորդի համար, և վաճառողը չի կարող դրանք վաճառել երրորդ կողմի: Գնորդից մերժում ստանալուց հետո վաճառողը դիմում է իրավասու դատարան՝ ընդդեմ գնորդի: Դատարանը որոշումը կայացնում է ամբողջությամբ վաճառողի օգտին և պարտավորեցնում է գնորդին վճարել պայմանագրի գինը:

- 1) Վաճառողը և գնորդը՝ երկուսն էլ տեղական ընկերություններ են, որոնք գտնվում են Երևան քաղաքում:
- 2) Վաճառողը դիմում է դատարան ընդդեմ գնորդի՝ պայմանագրով սահմանված գումարը բռնագանձելու պահանջով: Հայցագնի արժեքը կազմում է 2,724,318 ՀՀ դրամ:
- 3) Դատարանը որոշում է կայացնում, որ վեճը ենթակա է քննության Երևան քաղաքում, և իրավասու է քննելու վերոնշյալ հայցագնով առևտրային վեճը:
- 4) Գնորդը առարկում է հայցի դեմ, որը հետո քննվում է ըստ էության: Դատարանը չի կարողանում վճիռ կայացնել՝ հիմնվելով միայն կողմերի գրավոր ցուցմունքների կամ ընդհանուր իրավական հիմնավորումների վրա:
- 5) Վաճառողը մտավախություն է հայտնում, որ գնորդը կարող է վատնել իր գույքը, այն տեղափոխել դատարանի իրավասության տարածքից դուրս կամ դառնալ անվճարունակ: Այդ պատճառով վաճառողը միջնորդում է, և դատարանը բավարարում է նախքան վճռի ստացումը գնորդի շարժական գույքի վրա (գրասենյակային գույք կամ փոխադրամիջոցներ և այլն) արգելանք դնելու հայցը:
- 6) Դատական վարույթի ընթացքում պահանջվում և տրամադրվում են կարծիքներ Վաճառողի մատակարարած ապրանքների որակի մասին:
 - ա) Կողմերից յուրաքանչյուրը հրավիրում է մեկական փորձագետ՝ վաճառողի մատակարարած ապրանքների որակի մասին կարծիք տրամադրելու համար, կամ
 - բ) Դատավորի կողմից նշանակվում է անկախ փորձագետ: Ենթադրվում է, որ ոչ մի այլ փորձագետի կողմից հակառակ կարծիք չի տրամադրվում:

3 Ստանդարտ գործը և հարցաշարը տե՛ս http://www.doingbusiness.org/-/media/GIAWB/Doing%20Business/Documents/Methodology/Survey-Instruments/DB2013/Enforcing_contracts_survey_en.pdf

4 Համաձայն «Doing Business» ծրագրի մեթոդաբանության (<http://www.doingbusiness.org/methodology/enforcing-contracts>)՝ որպես տիպային գործով առևտրային վեճի առարկա հանդիսացող գումարի չափ, հիմք է ընդունվում տվյալ պետությունում մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 200%-ը: ՀՀ-ում 2012թ.-ի համար մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի չափի մասին տեղեկությունը տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքի «Մակրոտնտեսական ցուցանիշներ» բաժնում՝ <http://minfn.am/main.php?lang=1&mode=macroind&iseng=1&isarm=1>: Ըստ տվյալ բաժնում հրապարակված «ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (ետամյակային)» փաստաթղթի՝ ՀՀ-ում մեկ շնչին ընկող ՀՆԱ-ն 2012թ.-ի համար 3,269 ԱՄՆ դոլար է, իսկ ՀՆԱ-ի ծավալը՝ 9.9 միլիարդ ԱՄՆ դոլար: 3,269 ԱՄՆ դոլարը կկազմի 1,362,159 ՀՀ դրամ, իսկ այս գումարի 200%-ը՝ 2,724,318 ՀՀ դրամ: Մեկ ԱՄՆ դոլարի՝ ՀՀ դրամի նկատմամբ փոխարժեքը տե՛ս ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքում՝ www.cba.am (հաշվարկի ժամանակ հիմք է ընդունվել 15.05.2013թ.-ի փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլարը՝ 416.69 ՀՀ դրամ):

-
- 7) Վճիռը կայացվում է 100%-ով վաճառողի օգտին: Գնորդը վճռի ուժով պարտավոր է վաճառողին վճարել պայմանագրով համաձայնեցված գինը:
 - 8) Գնորդը չի բողոքարկում դատարանի վճիռը:
 - 9) Վաճառողը որոշում է սկսել վճռի կատարումը: Երբ վերաքննության կարգով բողոքարկելու օրենքով սահմանված ժամկետը լրանում է, ձեռնարկում է վճռի պատշաճ կատարման համար պահանջվող բոլոր քայլերը: Ենթադրվում է, որ գնորդը գումար չունի իր բանկային հաշիվներում, և պայմանագրի գինը հաջողությամբ բռնագանձվում է գնորդի շարժական գույքի (գրասենյակային գույք կամ փոխադրամիջոցներ և այլն) հրապարակային վաճառքի միջոցով:

Սահմանումներ. սույն ուսումնասիրության մեջ օգտագործված եզրույթներն ունեն հետևյալ նշանակությունը՝

- 1) **Իրավասու դատարան. Երևան քաղաքում** գտնվող դատարան, որն իրավասու է քննելու տիպային վեճի ենթադրություններում նկարագրված առևտրային վեճերին նման վեճեր:
- 2) **Արգելանք.** դատական որոշում, որը կայացվել է մինչև դատավարությունը և դատական վճռի կայացումը կամ դրա ընթացքում գնորդի կողմից իրեն պատկանող որոշակի գույքի վաճառքը, տեղաշարժը կամ այլ գործարքների կատարումը կանխելու համար, մինչև վեճի ըստ էության լուծումը: Այդպիսի արգելանքի նպատակն է կանխել գնորդի կողմից ապագա վճռի կատարմանը խոչընդոտելու համար իր գույքի վատնումը կամ տեղաշարժը:
- 3) **Վկայություն տվող փորձագետ.** անձ, ով ունի անհրաժեշտ որակավորում և փորձ կարծիք հայտնելու մատակարարված ապրանքների որակի համապատասխանության մասին: Փորձագետի կարծիքը պահանջվում և տրամադրվում է մինչև վճռի կայացումը:

Ուսումնասիրության այս հատվածում ներկայացված են «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչի համար «Doing Business» ծրագրի համապատասխան հարցաշարի կողմից առաջարկվող հարցերի պատասխանները (ստանդարտ դատական գործի օրինակով):

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Վերջին բարեփոխումները ՀՀ-ում առևտրային վեճերի լուծման ոլորտում

Հարց. 01.06.2012թ. հետո եղել են արդյոք բարեփոխումներ (իրավակիրառ պրակտիկայում կամ օրենսգրքերում և այլ իրավական ակտերում) ՀՀ-ում առևտրային բնույթի վեճերի լուծման կապակցությամբ:

Պատասխան. Առևտրային բնույթի վեճերի լուծման կապակցությամբ ՀՀ-ում 01.06.2012թ. հետո ընկած ժամանակահատվածում որևէ բարեփոխում չի կատարվել:

Սակայն ՀՀ Նախագահի կողմից 30.06.2012թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա Կարգադրությունը⁵: Այդ կարգադրությամբ հաստատված բարեփոխումների ծրագիրը (այսուհետ նաև՝ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. Ծրագիր) թեև ուղղակիորեն չի անդրադառնում առևտրային բնույթի վեճերի լուծման հետ կապված որևէ բարեփոխման, սակայն ընդհանուր առմամբ նախատեսում է մի շարք բարեփոխումներ ՀՀ իրավական և դատական համակարգում, ինչի արդյունքում կարող է բարձրանալ դատական գործերի, այդ թվում՝ առևտրային բնույթի վեճերի քննության օբյեկտիվությունը, արդյունավետությունը և արագությունը:

2. ՀՀ-ում առևտրային վեճերի լուծման կապակցությամբ նախատեսվող բարեփոխումներ

Հարց. Տեղեկացված էք արդյոք ՀՀ-ում առևտրային վեճերի լուծման կապակցությամբ նախատեսվող բարեփոխումների մասին (իրավակիրառ պրակտիկայում կամ օրենքներում և այլ իրավական ակտերում):

ա) մինչև 01.06.2013թ.

Պատասխան. Մինչև 01.06.2013թ. առևտրային բնույթի վեճերի լուծման կապակցությամբ ՀՀ-ում բարեփոխումներ չեն եղել:

բ) 01.06.2013թ. հետո

Պատասխան. ՀՀ-ում սպասվում են փոփոխություններ և լրացումներ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում (ՀՀ քաղ. դատ. օր.)⁶ կապված քաղաքացիական գործերով ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից դատական ծանուցումների կարգի, գործի քննության հետաձգման պայմանների, վճիռների հիմնավորվածության պայմանների, ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումների հիմնավորվածության պայմանների և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքների վարույթ ընդունելու պայմանների հստակեցման և կատարելագործման հետ: Դատական ծանուցումների մասով նշված փոփոխությունների և լրացումների արդյունքում նախատեսվում է կատարելագործել դատարանի կողմից գործին մասնակցող անձանց, առանձին դեպքերում՝ էլեկտրոնային եղանակով դատական ծանուցագրեր ուղարկելու ինստիտուտը: Այդ կապակցությամբ փոփոխություններ և լրացումներ են նախատեսվում նաև «Ինտերնետով իրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքում:

Բարեփոխումներ են նախատեսվում նաև ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. Ծրագրով: Մասնավորապես ծրագրի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- ⊙ Քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացում և քաղաքացիական օրենսդրության կատարելագործում,
- ⊙ դատավարական գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացում:

5 Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76932> , <http://www.president.am/hy/Directives/item/753/>

6 Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75263>

Քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացմանը և քաղաքացիական օրենսդրության կատարելագործմանն ուղղված միջոցառումների իրականացումից հետո նախատեսվում է.

- ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (ՀՀ քաղ. օր.)⁷ համապատասխանեցնել մասնավոր իրավահարաբերությունների կարգավորման ժամանակակից մոտեցումներին,
- հստակեցնել քաղաքացիական դատավարությունում ապացուցման գործընթացը,
- մշակել նախնական դատական նիստերի առավել ամբողջական կանոններ, կրճատել քաղաքացիական գործերի քննության ժամկետները և այլն:

Դատավարական գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումից հետո նախատեսվում է.

- մշակել դատական նիստերի չարդարացված հետաձգումների կանխարգելման ընթացակարգեր,
- որոշել դատական նիստերի նշանակման առաջնահերթության կանոններ,
- բացառել գործերի քննության հետաձգումները օրենքով չնախատեսված որևէ հիմնավորումով,
- գործի քննության ողջամիտ ժամկետների խախտման դեպքում նախատեսել արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ,
- նախատեսել գործերի քննության տևողության մոնիթորինգի մեխանիզմներ,
- կատարելագործել դատական փորձաքննության նշանակման և անցկացման գործընթացը, փորձագետներին հարցաքննելու և նրանց եզրակացությունների արժանահավատությունը ստուգելու կարգը,
- սահմանել արտագնա դատական նիստերի իրականացման դեպքեր,
- ներդնել դատական ծախսերի բաշխման արդար, թափանցիկ և հստակ համակարգ,
- ներդնել դատական ծանուցումների առավել արդյունավետ մոդելներ,
- վերանայել դատարաններում արագացված դատաքննության ինստիտուտը,
- կատարելագործել դատական ակտերի որոնման համակարգը և այլն:

Վերջին ունեցած փորձը

Հարց. Նոր կամ ընթացող քանի գործ եք մուտք արել կամ վարել Դուք կամ Ձեր գրասենյակը իրավասու դատարանում 01.06.2012թ. հետո:

Պատասխան. 01.06.2012թ. հետո ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններում մուտք են արվել կամ վարվել են շուրջ XX քաղաքացիական գործեր:

Պարզաբանում

XX-ի փոխարեն յուրաքանչյուր պատասխանող նշում է իր կողմից ընդհանուր իրավասության դատարաններում մուտք արած կամ վարած քաղաքացիական գործերի քանակը:

Ա. ԴԱՏԱՐԱՆՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՕՐԵՆՔ

1. Իրավասու դատարան

«Doing Business» ծրագրի 2,742,318 ՀՀ դրամ արժողությամբ ստանդարտ գործի քննության համար իրավասու դատարաններ են ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները:

ա. **Հարց.** Արդյոք այս տեղեկությունը դեռ ճիշտ է:

Պատասխան. Այո, ճիշտ է:

բ. **Հարց.** Եթե այդ դատարանը իրավասու դատարան չէ կամ դատարանի անվանումը ճիշտ չէ, խնդրվում է պարզաբանել:

Պատասխան. Կիրառելի չէ:

գ. **Հարց.** Իրավասու դատարանի համար ի՞նչ է դրամական շեմը:

Պատասխան. Կիրառելի չէ: ՀՀ-ում քաղաքացիական գործերով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմելու համար դրամական շեմ չի նախատեսվում: Համաձայն ՀՀ քաղ. դատ. օր.-ի՝ «Քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին»⁸:

դ. **Հարց.** Կարո՞ղ է ներկայացված տիպային վեճը ընդդատյա լինել նաև այլ դատարանի:

Պատասխան. Ըստ ՀՀ օրենսդրության ներկայացված տիպային վեճը չի կարող ընդդատյա լինել այլ դատարանի:

2. Մասնագիտացված առևտրային դատարան

ՀՀ-ում առկա չէ այնպիսի դատարան կամ դատարանի ներսում դատարանի որևէ բաժանում, որը կոչված է քննելու միայն առևտրային բնույթի վեճեր:

ա. **Հարց.** Արդյոք այս տեղեկատվությունը դեռ ճիշտ է:

Պատասխան. Այո, ճիշտ է:

բ. **Հարց.** Ինչպե՞ս է այդ դատարանի անվանումը:

Պատասխան. Կիրառելի չէ:

գ. **Հարց.** Ո՞րն է այդ դատարանի դիմելու համար դրամական շեմը:

Պատասխան. Կիրառելի չէ:

⁸ ՀՀ քաղ. դատ. օր. 15-րդ հոդված, 1-ին մաս

3. Դատավարական կանոններ

Ստանդարտ գործի նկատմամբ ՀՀ-ում կիրառվում են հետևյալ օրենքները՝

- ⊙ ՀՀ քաղ. օր.,
- ⊙ ՀՀ քաղ. դատ. օր.,
- ⊙ ՀՀ դատական օրենսգիրք⁹,
- ⊙ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք («ԴԱՀԿ մասին» օրենք)¹⁰,
- ⊙ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք¹¹:

ա. **Հարց.** Արդյոք այս տեղեկատվությունը դեռ ճիշտ է:

Պատասխան. Այո, ճիշտ է:

բ. **Հարց.** Երբ են ընդունվել նշված օրենքները:

Պատասխան.

- ⊙ ՀՀ քաղ. օր.-ն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի (ՀՀ ԱԺ) կողմից 05.05.1998թ.:
- ⊙ ՀՀ քաղ. դատ. օր.-ն ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 17.06.1998թ.:
- ⊙ ՀՀ դատական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 21.02.2007թ.:
- ⊙ «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 05.05.1998թ.:
- ⊙ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 08.10.2003թ.:

գ. **Հարց.** Երբ են վերջին անգամ փոփոխվել կամ լրացվել նշված օրենքները:

Պատասխան.

- ⊙ ՀՀ քաղ. օր.-ը վերջին անգամ փոփոխությունների և լրացումների է ենթարկվել ՀՀ ԱԺ-ի կողմից 12.11.2012թ.¹²:
- ⊙ ՀՀ քաղ. դատ. օր.-ը վերջին անգամ լրացումների է ենթարկվել ՀՀ ԱԺ-ի կողմից 20.03.2012թ.¹³:
- ⊙ ՀՀ դատական օրենսգիրքը վերջին անգամ փոփոխությունների և լրացումների է ենթարկվել ՀՀ ԱԺ-ի կողմից 19.12.2012թ.¹⁴:
- ⊙ «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքը վերջին անգամ փոփոխությունների և լրացումների է ենթարկվել ՀՀ ԱԺ-ի կողմից 19.03.2012թ.¹⁵:
- ⊙ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը վերջին անգամ փոփոխությունների և լրացումների է ենթարկվել ՀՀ ԱԺ-ի կողմից 19.03.2012թ.¹⁶:

9 Տե՛ս՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80493>

10 Տե՛ս՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75430>

11 Տե՛ս՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75480>

12 Տե՛ս՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80019>

13 Տե՛ս՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=74983>

14 Տե՛ս՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80469>

15 Տե՛ս՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75357>

16 Տե՛ս՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75370>

Բ. ԺԱՄԿԵՏՆԵՐ

1. Հայցադիմումի լրացում և ծանուցում

Հայցվորի (վաճառողի) որոշումը պատասխանողի (գնորդի) դեմ դատարան դիմելու մասին՝ մինչև պատասխանողի (գնորդի) ծանուցվելը դատարանի կողմից: Գործի ուսումնասիրության ժամանակ ենթադրվում է, որ երկու կողմերն էլ Երևան քաղաքում գտնվող ընկերություններ են:

ա. **Հարց.** Կարո՞ղ է արդյոք սկզբնական հայցադիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով:

Պատասխան. Ոչ, հայցադիմումների էլեկտրոնային եղանակով ներկայացում սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ: Սակայն Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. Ծրագրով նախատեսվում է բարելավել դատարաններում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը՝ ներդնելով նաև հայցադիմումները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորությունը¹⁷:

- Եթե սկզբնական հայցադիմումի ներկայացումը կարող է կատարվել էլեկտրոնային եղանակով, ինչպես է դա իրականացվում:

Կիրառելի չէ:

- Արդյոք պահանջվում է ներկայացնել հայցադիմումի տպագիր տարբերակը:

Կիրառելի չէ:

բ. **Հարց.** Ինչպե՞ս է հայցադիմումը ներկայացվում դատարան:

Պատասխան. Հայցադիմումը կարող է ներկայացվել դատարան հետևյալ եղանակներով՝

- ⊙ Փոստային կամ սուրհանդակային ծառայության միջոցով: Դա սահմանված չէ ՀՀ քաղ. դատ. օր.-ով, սակայն արգելված չէ,
- ⊙ Հայցվորի ներկայացուցչի միջոցով՝ հայցադիմումին կցելով վերջինիս հայց հարուցելու լիազորությունները հավաստող լիազորագիրը¹⁸,
- ⊙ Հայցվորի կողմից անձամբ:

գ. **Հարց.** Ձեր կարծիքով ի՞նչ է վաճառողի կողմից գնորդի դեմ դատարան դիմելու մասին որոշում կայացնելու և դատավարության մասին պատասխանողին ծանուցելու միջև ընկած ժամանակահատվածի ձգձգման հիմնական պատճառը:

Պատասխան. Վաճառողի հայցադիմումը դատարան ներկայացվելուց և դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունվելուց հետո երեք օրվա ժամկետում համապատասխան որոշումը ուղարկվում է պատասխանողին (հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի պատճենների հետ միասին), որը սովորաբար, խոչընդոտների բացակայության դեպքում, հանձնվում է պատասխանողին մինչև 2 աշխատանքային օրերերի ընթացքում: Սակայն պրակտիկայում հաճախ պատահում են դեպքեր, երբ նշված փաստաթղթերի հանձնումը պատասխանողին ձգձգվում է: Ձգձգման պատճառներից են՝

- ⊙ Փոստային ծառայության անարդյունավետ աշխատանքը, սակայն ոչ թե ծանուցման առաքման, այլ ծանուցման հանձնման հարցում: Հաճախ փոստային կապի ծառայության աշխատակիցները չեն ճշտում, չեն պարզում հասցեատիրոջը և անձամբ նրան չեն հանձնում փոստային առաքանին: Դատարանը ստանում է փոստային ծանուցման թերթիկ՝ ստացողի ստորագրությամբ, սակայն նիստերին պատասխանողը չի ներկայանում: Այնուհետև պարզվում է, որ դատարանի ծանուցման ստացողը փաստորեն եղել է ոչ թե պատասխանողը, այլ ուրիշ անձ, և պատասխանողն իրականում դեռ ծանուցված չէ:
- ⊙ Հայցվորի մոտ առկա և դատարանին հայտնաձգված պատասխանողի հասցեի սխալ լինելը, ինչի հետևանքով դատական ծանուցագիրը փոստային ծառայության կողմից հետ է վերադարձվում դատարան: Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից կարելի է ստանալ ընկերության իրավաբանական հասցեն: Սակայն հաճախ ընկերությունների իրավաբանական հասցեները և փաստացի գործունեության վայրի հասցեները լինում են տարբեր, ինչը ևս խոչընդոտ է ստեղծում պատասխանողին ծանուցելու հարցում:

Մեկնաբանում

Հայցադիմումի լրացման և պատասխանողին ծանուցման տևողությունը պայմանավորված է ՀՀ-ում հայցադիմումների էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորության բացակայությամբ, դատավարական ծանուցումների կարգի անկատարությամբ (ներառյալ ծանուցումների ընթացքում դատարանի և կողմի ծանուցման ապահովման գործընթացին միջամտելու սահմանափակ իրավունքները) և այլն:

17 Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. Ծրագիր, 3.11. կետ:

18 ՀՀ քաղ. դատ. օր. 88-րդ հոդված, 2-րդ մաս

2. ԴատավարուԼթյուն և վճիռ

Պատասխանողին (գնորդին) դատավարության մասին ծանուցելուց հետո՝ մինչև վճռի կայացումը և վճռի վերաքննության կարգով բողոքարկման ժամկետի լրանալը, այդ թվում, եթե կիրառելի է, մինչև վճռի կայացումը պատասխանողի գույքի վրա արգելանք դնելը, հետաձգումները և փորձագետի կողմից կարծիքի տրամադրումը.

- ա. **Հարց.** Դատավարության մասին ծանուցվելուց հետո, պատասխանողը գործնականում որքան ժամանակ ունի պատասխան ներկայացնելու համար:

Պատասխան. Դատարանից իր դեմ հարուցված քաղաքացիական գործով հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը (որում պարտադիր նշվում է նաև գործի քննության ժամանակի և վայրի մասին) ստանալուց հետո պատասխանողը պարտավոր է երկշաքայիա ժամկետում (14 օրացույցային օր) դատարանին ներկայացնել հայցադիմումի պատասխան¹⁹: Ելնելով գործի առանձնահատկություններից՝ դատարանը կարող է սահմանել պատասխան ուղարկելու ավելի երկար ժամկետ կամ պատասխանողի միջնորդությամբ երկարաձգել պատասխանը ներկայացնելու ժամկետը:

- բ. **Հարց.** Գործնականում որքան ժամանակ է պահանջվում, որպեսզի պատասխանողը ստանա դատավարական առաջին նիստի ամսաթվի մասին տեղեկատվությունը (երբ պատասխանողն արդեն ծանուցված է):

Պատասխան. Կիրառելի չէ:

Պարզաբանում

Պատասխանողը դատարանից առաջին անգամ ծանուցվում է՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճենները դատարանից ստանալով: Հայցադիմումը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում դատարանը վարույթ ընդունելու մասին կայացնում է որոշում, ուր միաժամանակ նշվում է գործի քննության օրվա և վայրի մասին²⁰: Ուստի, պատասխանողը դատարանից առաջին անգամ ծանուցվելու հետ միաժամանակ ստանում է նաև տեղեկություն դատավարական առաջին նիստի ժամանակի (ամսաթվի) և վայրի մասին: Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը դատարանը պարտավոր է պատշաճ ձևով ուղարկել գործին մասնակցող անձանց՝ որոշումը կայացնելու օրվանից եռօրյա ժամկետում²¹: Դատարանի կողմից պատշաճ ձևով որոշումների, ծանուցումների ուղարկելը գործնականում կատարվում է փոստային կապի միջոցով՝ պատվիրված և հետծանուցման եղանակով ծրարներ ուղարկելով գործին մասնակցող անձանց՝ ըստ դատարանին հայտնի հասցեների: Ներկայումս ՀՀ դատարաններն օգտվում են ՀՀ-ում փոստային կապի ազգային օպերատորի՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կապի ծառայություններից: Երևան քաղաքում փոստային նամակները «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից առաքվում են 1-2 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Երևանից մարզեր նամակներ ուղարկելու դեպքում՝ 2-3 աշխատանքային օրերի ընթացքում:

- գ. **Հարց.** Գործնականում՝ որքան ժամանակ է պահանջվում դատավարական նիստի ամսաթվի մասին տեղեկատվություն ստանալու համար:

Պատասխան. Դատավարական նիստի ամսաթվի մասին տեղեկատվությունը գործին մասնակցող անձինք ստանում են դատարանից պատշաճ ձևով (փոստի միջոցով) ուղարկելու եղանակով՝ Երևան քաղաքում 1-2 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Երևան քաղաքից մարզեր ուղարկելու դեպքում՝ 2-3 աշխատանքային օրվա ընթացքում:

19 ՀՀ քաղ. դատ. օր. 95-րդ հոդված, 1-ին մաս

20 ՀՀ քաղ. դատ. օր.-ի 90-րդ հոդված, 2-րդ մաս

Սակայն հարկ է նշել նաև, որ պրակտիկայում պատահում են դեպքեր, երբ դատարանը պատասխանողին ուղարկում է քաղաքացիական գործով հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը, սակայն այդ որոշման մեջ դեռ նշած չի լինում նիստի օրը, ժամը և վայրը, ինչը հակասում է ՀՀ քաղ. դատ. օր.-ի 90-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին: Մյուս կողմից էլ՝ դատարաններն այդպես են վարվում, քանի որ առաջին անգամ պատասխանողին բոլոր փաստաթղթերն ուղարկելիս դեռ համոզված չեն՝ նա կստանա դրանք, թե՛ ոչ, և նպատակ են հետապնդում նախ ստանալ հավաստում, որ պատասխանողը պատշաճ ծանուցվում է տվյալ հասցեով, և հետո միայն նշանակել նիստ. եթե պատասխանողը չստանա ուղարկված փաստաթղթերը, ուրեմն արդեն նշանակված առաջին նիստին դատարանը չի ունենա պատասխանողի պատշաճ ծանուցման հավաստում և ստիպված պետք է լինի արդեն նշանակված նիստը բացել և կայացնել գործի քննությունը հետաձգելու մասին որոշում:

Իսկ եթե պատասխանողն առաջին փորձից ստանում է փաստաթղթերը և դատարանն էլ ստանում է հավաստում (հետադարձ ծանուցման փոստային թերթիկ) այն մասին, որ պատասխանողին հանձնվել են ուղարկված փաստաթղթերը, ապա դատարանը նշանակում է նիստ և պատասխանողը 3-5 աշխատանքային օրվա ընթացքում դատարանից կստանա ծանուցում դատական նիստի օրվա, ժամի և վայրի մասին:

21 ՀՀ քաղ. դատ. օր. 145-րդ հոդված

Սակայն, եթե գործին մասնակցող անձինք ներկա են եղել նախորդ նիստին, ապա դատարանը, գործի քննությունը հետաձգվելու և նոր դատական նիստի ամսաթիվը որոշված լինելու դեպքում, իրավունք ունի գործին մասնակցող անձանց ծանուցել անմիջապես այդ նիստի ընթացքում՝ ստացականով, ինչը նույնպես համարվում է գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցում նիստի ժամանակի և վայրի մասին²²:

Դատարանն իրավունք ունի հայցվորին կամ պատասխանողին ծանուցագիրն ուղարկել նաև էլեկտրոնային փոստի հասցեով, եթե այդ էլեկտրոնային փոստի հասցեն նշվել է հայցվորի կողմից իր հայցադիմումում կամ պատասխանողի կողմից իր պատասխանում: Նման ձևով ծանուցումը համարվում է պատշաճ, եթե առկա է էլեկտրոնային ծանուցագիրը ստանալու մասին էլեկտրոնային հավաստում²³:

- դ. **Հարց.** Գործնականում քանի նախնական և դատաքննության նիստեր տեղի կունենան ներկայացված տիպային վեճի լուծման համար:

Պատասխան. Տիպային վեճի քննության և լուծման համար գործնականում կարող են տեղի ունենալ շուրջ 5-10 դատական նիստ (ներառյալ գործի նախապատրաստման փուլը (նախնական դատական նիստեր)):

- ե. **Հարց.** Արդյոք կողմերի (հայցվորի կամ պատասխանողի) համար ընդունված պրակտիկա է (50%-ից ավելի դեպքերում) միջնորդել՝ հետաձգելու գործի քննությունը:

Պատասխան. Ոչ, այդպիսի ընդունված պրակտիկա ՀՀ-ում քաղաքացիական դատավարությունների ընթացքում առկա չէ: Սակայն հաճախ են պատահում դեպքեր, երբ հայցվորը կամ պատասխանողը միջնորդում են հետաձգելու գործի քննությունը՝ լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու համար կամ պատասխանողը, ամբողջությամբ ընդունելով գույքի բռնագանձման վերաբերյալ հայցը, միջնորդում է դատարանին՝ պարտավորության կատարման համար ողջամիտ ժամկետ տրամադրելու համար՝ միաժամանակ ներկայացնելով գործի քննությունը հետաձգելու միջնորդություն²⁴:

- զ. **Հարց.** Երբ դատավարությունը կամ ցուցմունքների լսումը հետաձգվում է, սովորաբար որքան պետք է սպասեն կողմերը, մինչև հաջորդ նիստի կայանալը:

Պատասխան. Նման դեպքերում կողմերը սովորաբար սպասում են մեկ շաբաթից ավելի, սակայն մեկ ամսից պակաս (այնուամենայնիվ, կախված հետաձգման պատճառից, ժամկետը կարող է ավելի երկար լինել):

- է. **Հարց.** Գործնականում քանի օրով դատավարությունը կձգձգվի հետաձգումների պատճառով:

Պատասխան. Հետաձգումների դեպքում դատավարությունը սովորաբար ամեն անգամ ձգձգվում է միջինը 120-160 օր օր (քանի որ յուրաքանչյուր հետաձգման արդյունքում նիստերի միջև ընկած ժամանակահատվածը միջինը կարող է լինել մինչև 15-20 օր, իսկ նիստերի քանակն էլ կարող է լինել մինչև 5-10 նիստ (միջինը՝ 8 նիստ), ապա հետաձգումների միջև ընկած ժամանակահատվածների պատճառով դատարավորության տևողությունը կարող է երկարել այդ ժամանակահատվածների հանրագումարի չափով):

- ը. **Հարց.** Երբ կողմերի դատավարական գործողությունները և նիստերը տեղի են ունենում.

- ⊙ Գործնականում որքան ժամանակ է հարկավոր դատավորին՝ բանավոր վճիռ կայացնելու համար:

Պատասխան. Կիրառելի չէ:

- ⊙ Գործնականում որքան ժամանակ է հարկավոր դատավորին՝ գրավոր վճիռ կայացնելու համար:

Պատասխան. Նիստի նախագահողը (դատավորը), բոլոր ապացույցները հետազոտելուց հետո, գործի քննությունը հայտարարում է ավարտված: Այնուհետև դատարանը հայտարարում է վճռի հրապարակման վայրն ու ժամանակը: Դատարանի վճիռը հրապարակվում է գործի քննությունն ավարտելուց հետո 15 օրվա ընթացքում²⁵:

22 ՀՀ քաղ. դատ. օր. 78-րդ հոդված, 2-րդ մաս

23 ՀՀ քաղ. դատ. օր. 78-րդ հոդված, 4-րդ մաս

24 ՀՀ քաղ. դատ. օր. 119-րդ հոդված, 1-ին մաս

25 ՀՀ քաղ. դատ. օր., 124-րդ հոդված

թ. **Հարց.** Որքան է օրենքով սահմանված առավելագույն ժամկետը առաջին ատյանի դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար:

Պատասխան. Առաջին ատյանի դատարանի վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում²⁶:

ժ. **Հարց.** Ձեր կարծիքով, ինչն է դատավարության և վճռի կայացման ուշացման հիմնական պատճառը:

Պատասխան. Որպես պատճառ կարող են հանդիսանալ դատարանում առկա այլ չավարտված գործերը, հետաձգումները, ինչպես նաև փորձաքննության նշանակումը, որը հաճախ հանգեցնում է քաղաքացիական գործի վարույթի կասեցման՝ հաշվի առնելով փորձաքննության անցկացման և եզրակացության ստացման տևողությունը:

Մեկնաբանում

Դատավարության և վճռի կայացման ներկայիս տևողությունը պայմանավորված է դատավարական ծանուցումների կարգի, գործի քննության հետաձգման հիմքերի, փորձաքննության անցկացման գործընթացի, դատարանների ծանրաբեռնվածության, մասնագիտացման բացակայության և այլ կարևորագույն հարցերի օրենսդրական կարգավորման ոչ բավարար արդյունավետ մակարդակով:

3. Վճռի կատարում

Սկսվում է վճռի բողոքարկման ժամկետը սպառվելու օրվանից և ավարտվում, երբ հայցվորը (վաճառողը) պատասխանողի (գնորդի) շարժական գույքի հրապարակային վաճառքի միջոցով ստանում է ապրանքի դիմաց վճարումը: Ժամանակահատվածն ընդգրկում է, եթե կիրառելի է, կատարման ընթացքում պատասխանողի գույքի արգելադրումը:

ա. **Հարց.** Գործնականում սովորաբար որքան ժամանակ ունի պատասխանողը, որպեսզի կամովին կատարի վճիռը:

Պատասխան. Օրենքով որևէ ժամկետ չի սահմանվում վճռի կամովին կատարման համար: Սակայն, եթե պատասխանողը բավարար հնարավորություն ունի վճիռը կամովին կատարելու համար, ապա վերջինս կարող է դիմել հայցվորին՝ խնդրելով որոշակի ժամանակ կատարողական թերթը չներկայացնել ՀՀ արդարադատության նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը (ԴԱՀԿ ծառայություն)՝ մինչև իր կողմից վճռի փաստացի կատարումը:

Միաժամանակ, եթե հայցվորն, այնուամենայնիվ, ներկայացրել է կատարողական թերթը ԴԱՀԿ ծառայությանը, պատասխանողն իրավունք ունի դիմելու վճիռը կայացրած դատարանին՝ դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու խնդրանքով: Դատարանը կարող է հետաձգել կամ տարաժամկետել դատական ակտի կատարումը, եթե պարտապանը (պատասխանողը) պահանջատիրոջը (հայցվորին) պատրաստ է տրամադրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, քանի որ *ողջամիտ ժամկետում դատական ակտը կկատարվի կամովին*²⁷:

բ. **Հարց.** Ենթադրենք, որ շարժական գույքի վրա արգելանքը դեռ դրված չէ: Այդ դեպքում գործնականում որքան ժամանակ կպահանջվի շարժական գույքը արգելադրելու (բացի բանկում եղած գումարից կամ կանխիկից) և ֆիզիկապես դրանք պատասխանողի տիրապետումից հեռացնելու համար:

Պատասխան. Վճիռն ուժի մեջ մտնելուց հետո պատասխանողի գույքի վրա արգելանք դնելը²⁸ կարող է տևել մինչև 5-10 աշխատանքային օր: Դա իր մեջ ներառում է վճռի կատարողական թերթը դատարանից ստանալը (դիմումը ներկայացնելուց հետո՝ 3-5 աշխատանքային օր), այն ԴԱՀԿ ծառայությանը ներկայացնելը և պատասխանողի գույքի վրա արգելանք դնելը (մինչև 3-5 աշխատանքային օր՝ կախված պատասխանողի գույքի տեսակներից):

26 ՀՀ քաղ. դատ. օր., 140-րդ հոդված, 1-ին մաս և 140.1 հոդված, 1-ին մաս

27 «ԴԱՀԿ մասին» օրենք, 22-րդ հոդված, 1-ին մաս

28 Վճռի ուժի մեջ մտնելուց հետո գույքի վրա արգելանք դնելը պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու սկզբնական փուլն է՝ համաձայն «ԴԱՀԿ մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի: 43-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «1. Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա արգելանք դնելը, այն առգրավելը և հարկադիր իրացնելը (աճուրդ կամ ուղղակի վաճառք):»

Եթե պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար չկան անհրաժեշտ դրամական միջոցներ, ապա բռնագանձումը տարածվում է պարտապահին պատկանող այլ գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել²⁹: Պարտապան իրավաբանական անձի պարագայում գույքի վրա բռնագանձումը տարածվում է հետևյալ հերթականությամբ.

- ⊙ արտադրության մեջ անմիջականորեն չներգրավված հիմնական միջոցներ,
- ⊙ պատրաստի արտադրանք,
- ⊙ անավարտ արտադրանք, այդ թվում՝ հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ,
- ⊙ այլ գույք (այդ թվում անշարժ գույք)³⁰:

գ. **Հարց.** Մինչև վճռի կայացումը և վճռի կայացումից հետո արգելանքն ով է կիրառում:

Պատասխան. ՀՀ-ում դատական ակտերի հիման վրա գույքի վրա դրվող արգելանքը կիրառում է ԴԱՀԿ ծառայությունը:

դ. **Հարց.** Երբ պատասխանողի շարժական գույքն արդեն արգելանքի տակ է (և/կամ առգրավված է), որքանի՞ ժամանակ է պահանջվում մինչև սակարկության կայացումը:

Պատասխան. Պատասխանողի գույքի առաջին հրապարակային սակարկությունը կարող է տեղի ունենալ ամենաշուտը՝ 1 ամիս հետո, իսկ ամենաուշը՝ 2 ամսվա ընթացքում: «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքով կատարողական գործողությունների իրականացման համար սահմանվում է *երկամսյա ժամկետ*, սակայն կատարողական գործողությունների իրականացման երկամսյա ժամկետում *չեն հաշվարկվում* գույքի աճուրդային գործընթացում գտնվելու, գույքն ուղղակի վաճառքով իրացնելու, պարտապանի կամ նրա գույքի հետախուզման, ինչպես նաև կատարողական վարույթի հետաձգման կամ կասեցման ժամկետները³¹:

Օրենքով սահմանված անհապաղ, ինչպես նաև պարբերաբար կատարման միջոցով իրականացվող կատարողական գործողությունների նկատմամբ երկամսյա ժամկետը ևս չի կիրառվում³²:

Կատարողական գործողությունների կատարման համար սահմանված երկամսյա ժամկետը ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի կողմից կարող է երկարաձգվել մինչև 2 ամիս ժամկետով հարկադիր կատարման ծառայության մարզային (Երևանի քաղաքային) բաժնի պետի միջնորդությամբ³³:

Նախքան պատասխանողի գույքի իրացումը պետք է տեղի ունենա նաև պատասխանողի *գույքի գնահատում*, ինչը ազդում է գույքի հարկադիր աճուրդի գործընթացի տևողության վրա: Պատասխանողի գույքի գնահատումը և իրացումը կատարվում է «ԴԱՀԿ մասին» և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով³⁴:

Պարտապանի գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացվելու դեպքում՝ դրա վերաբերյալ որոշումը կայացվում է գույքի գնահատումից հետո՝ եռօրյա ժամկետում³⁵:

29 «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենք, 43-րդ հոդված, 3-րդ մաս

30 «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենք, 43-րդ հոդված, 4-րդ մաս

31 «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենք, 34-րդ հոդված, 1-ին մաս, 1-ին պարբերություն

32 «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենք, 34-րդ հոդված, 1-ին մաս, 2-րդ և 3-րդ պարբերություններ

33 «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենք, 34-րդ հոդված, 2-րդ մաս

34 «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենք, 53-րդ հոդված, 1-ին մաս

35 «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենք, 53-րդ հոդված, 2-րդ մաս, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք, 35.1., 35.2., 35.3 և 35.4. հոդվածներ
Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման և անցկացման կարգը տե՛ս նաև այստեղ՝
<http://harkadir.am/view-lang-arm-page-11.html>

ե. **Հարց.** Արդյոք սակարկության համար պահանջվում է հրապարակային ծանուցում:

- **Պատասխան.** Այո, սակարկության (հարկադիր աճուրդի) իրականացման համար «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում է աճուրդների *հրապարակային* կարգ³⁶: Նշված օրենքն ուղղակի սահմանում է նաև, որ աճուրդի մասին *հրապարակային ծանուցումը* հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցով և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում³⁷:

Հարկադիր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի դա անցկացնելու օրվանից առնվազն տասն օր առաջ՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված կարգով³⁸:

զ. **Հարց.** Ո՞վ է իրականացնում հրապարակային սակարկությունը:

Պատասխան. Դատական վճռի հիման վրա, կատարողական թերթին համապատասխան, հարկադիր աճուրդը կազմակերպում և իրականացնում է դատական ակտերի հարկադիր կատարողը³⁹:

է. **Հարց.** Որքան ժամանակ է պահանջվում, որպեսզի հայցվորը ստանա վճարումը պատասխանողի շարժական գույքի վաճառքից հետո:

Պատասխան. Գույքի հարկադիր աճուրդից հետո աճուրդի հաղթող անձը դրամական միջոցները փոխանցում է ԴԱՀԿ ծառայության բյուջետային հաշվեհամարին: Այնուհետև ԴԱՀԿ ծառայությունը կատարում է կատարողական ծախսերի պահում, իսկ մնացած գումարը փոխանցում է հայցվորի նշած հաշվեհամարին: Այս գործընթացը կարող է տևել 3-5 աշխատանքային օր՝ մինչև դրամական միջոցները կմուտքագրվեն հայցվորի բանկային հաշվարկային հաշվեհամարին:

ը. **Հարց.** Ձեր կարծիքով, վճռի կատարման փուլում ի՞նչ է ձգձգման հիմնական պատճառը:

Պատասխան. Որպես ձգձգման պատճառ կարող են լինել.

- ⊙ շարժական գույքի դեպքում՝ դրա հայտնաբերումը, գույքագրումը, արգելադրումը,
- ⊙ հրապարակային սակարկությունների անցկացմանը սպասելը,
- ⊙ հարկադիր կատարման վարույթում պարտապանին (վճռով պատասխանողը) հարկադիր աճուրդի մասին իրազեկելը,
- ⊙ գույքի համար գնորդ չհայտնաբերվելը և աճուրդների չկայանալը:

Մեկնաբանում

Վճռի կատարման փուլում ՀՀ-ում ներդրվել է էլեկտրոնային հրապարակային ծանուցումների համակարգը, ինչը թույլ է տալիս արագացնել դատական ակտի հարկադիր կատարման վարույթը, սակայն այնուհանդերձ, առանձին գույքերի դեպքում խնդիրներ են առաջանում գնորդ գտնելու հարցում:

36 «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված, 1-ին մաս

37 «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված, 2-րդ մաս

38 «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք, 31-րդ հոդված, 1-ին մաս

39 «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք, 29-րդ հոդված, 3-րդ մաս

9. ԾԱԽՍԵՐ

1. Տեղական իրավաբանական գրասենյակի կողմից գանձվող փաստաբանական միջին վճարներ, այդ թվում.

- 1) մինչև վճռի կայացումը գործի վարման վճարներ, ներառյալ նախադատական արգելանքը,
- 2) վճռի կատարման վճարներ, եթե իրավաբանին միաժամանակ վարձել են այդ նպատակով,
- 3) ավելացված արժեքի հարկ կամ այլ հարկեր, եթե կիրառելի է:

Շուրջ 2,724,318 ՀՀ դրամ արժողությամբ տիպային վեճի դեպքում գումարի բռնագանձման պահանջով հայցադիմումը կազմելու և առաջին ատյանի դատարանում հայցվորի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար փաստաբանական ծառայության վճարը ՀՀ-ում կարող է կազմել միջինը 250,000 ՀՀ դրամ՝ նկատի առնելով նաև գործի ծավալը և ժամանակատարությունը:

ա. **Հարց.** Կարգավորվում են արդյո՞ք իրավաբանի վճարները:

Պատասխան. Իրավաբանի վճարները օրենքով չեն կարգավորվում և սահմանված չեն սահմանափակումներ կամ վճարների չափեր կոնկրետ գործերի համար: Իրավաբանական (ներառյալ փաստաբանական) ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի տեսակ է: Համաձայն ՀՀ քաղ. օր.-ի՝ «Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պարվիրապուրի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պարվիրապուրն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար»⁴⁰: Վճարի չափ օրենքով սահմանված չէ և կողմերն ազատ են իրենց հայեցողությամբ որոշել իրավաբանական ծառայության ցանկացած վճարի չափ:

Միաժամանակ ՀՀ-ում գործող Փաստաբանի Վարքագծի Կանոնադրքով⁴¹ սահմանվում են որոշ պահանջներ փաստաբանական ծառայության վարձատրության չափի ձևավորման համար: Այդ պահանջները պարտադիր են բոլոր փաստաբանների համար⁴²: Նշված կանոնադրքով սահմանվում է. «Վարձատրությունը (հոնորարը), որը փաստաբանական գրասենյակը ստանում է, պետք է ամբողջապես բացահայտվի վստահորդին: Հոնորարի չափի և վճարման կարգի շուրջ համաձայնության են գալիս կողմերը՝ իրենց հայեցողությամբ: Հոնորարի չափի մեջ չի ներառվում փաստաբանի կատարած այլ ծախսերը, որոնք անհրաժեշտ են հանձնարարության կատարման համար (մասնավորապես՝ տրանսպորտային, թարգմանչական կամ մասնագետներին հրավիրելու, տպագրության, պատճենահանման, փոստային և նոտարական ծախսերը, ինչպես նաև այլ դատական ծախսերը), եթե կողմերի համաձայնությամբ այլ բան չի նախատեսվել»⁴³:

Սակայն ՀՀ քաղ. դատ. օր.-ի համաձայն՝ փաստաբանի վարձատրության գումարը միաժամանակ համարվում է դատական ծախս և դատարանի կողմից դատական ծախսերը բռնագանձելիս հիմք է ընդունվում միայն փաստաբանի *ողջամիտ* վարձատրությունը⁴⁴: ՀՀ դատական օրենսգրքի համաձայն՝ դատական իշխանություն իրականացնելիս դատավորը պարտավոր է չհաստատել այն դատական ծախսերը, որոնց չափը չի համապատասխանում դրանց ողջամիտ արժեքին⁴⁵:

Փաստաբանի վարձատրության խելամտության (ողջամտության) վերաբերյալ օրենքով որևէ չափանիշ սահմանված չէ: Սակայն դատական պրակտիկայում առկա է դատական ակտ, որտեղ դատարանը պարզաբանել է, թե ինչի համաձայն կարելի է որոշել փաստաբանի վարձատրության ողջամիտ չափը: Մասնավորապես ՀՀ Վճռաբեկ դատարանը ՀՀ Սահմանադրության համաձայն կոչված լինելով ապահովել օրենքի միատեսակ կիրառություն 29.06.2012թ. թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ, անդրադառնալով նաև փաստաբանի վարձատրության խելամտության հարցին, նշել է հետևյալը.

40 ՀՀ քաղ. օր.-ի 777-րդ հոդված, 1-ին մաս

41 Ընդունված է ՀՀ Փաստաբանների Պալատի (ՓՊ) ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ.-ին, <http://advocates.am/images/stories/rule%20of%20acting.pdf>

42 «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, 19-րդ հոդված, 2-րդ ենթակետ, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=73316>

43 Փաստաբանի Վարքագծի Կանոնադրք, 3.3.1. կետ

44 ՀՀ քաղ. դատ. օր.-ի 68-րդ հոդված

45 ՀՀ դատական օրենսգրքի 90-րդ հոդված, 3-րդ մաս, 10-րդ կետ

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով փաստաբանի վարձատրության խելամուտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը»:

բ. **Հարց.** Ո՞վ է կարգավորում իրավաբանների վճարները:

Պատասխան. Կիրառելի չէ:

գ. **Հարց.** Ի՞նչ հիմունքներով է սովորաբար փաստաբանը իր հաճախորդից պահանջում վարձատրությունը նման գործի համար:

Պատասխան. Սովորաբար փաստաբանները կամ իրավաբանական գրասենյակները մատուցվող իրավաբանական ծառայության համար սահմանում են ամբողջական, որոշված վճարներ:

Գործի արդյունքից կախված լրացուցիչ վճարներ սահմանելը ևս տարածված է ՀՀ իրավաբանական ծառայությունների շուկայում: Ժամավճարներ սահմանելը հաճախորդների մոտ ստեղծում է անորոշություն, մտավախություն և ՀՀ-ի իրավաբանական ծառայությունների մատուցման պրակտիկայում տարածված չէ: Խոշոր գումարային վեճերի դեպքում կիրառվում է նաև պահանջվող գումարից որոշակի տոկոսի չափով վարձատրության չափը որոշելու պրակտիկան:

դ. **Հարց.** Արդյո՞ք պատասխանողի կողմից ինքն իրեն անձամբ դատարանում ներկայացնելը հնարավոր է:

Պատասխան. Պատասխանողի համար ինքն իրեն անձամբ ներկայացնելը արգելված չէ օրենքով և հնարավոր է:

ե. **Հարց.** Եթե այո, ապա սովորաբար պատասխանողը ստանդարտ գործի դեպքում կվճարի փաստաբան, թե՛ ոչ:

Պատասխան. Գործնականում նման վեճերի դեպքում պատասխանողը կվճարի փաստաբան և դատարանում իր իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը կիրականացնի որակավորված, արտոնագրված իրավաբանի (փաստաբանի) միջոցով, ով տիրապետում է համապատասխան նյութական և դատավարական օրենսդրությանը:

զ. **Հարց.** Ե՞րբ է գործով հաղթող կողմը իրավունք ունենում ստանալու դատական ծախսերը:

Պատասխան. Գործով հաղթող կողմը կարող է ստանալ դատական ծախսերը ըստ օրենքի, երբ դատարանի կայացրած վճիռն օրինական ուժ է ստանում: ՀՀ քաղ. դատ. օր.-ի համաձայն «Վճռի եզրափակիչ մասում լուծվում է գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցը»⁴⁶: Սակայն դատական ծախսերը հավաստող փաստաթղթերը կողմը պետք է ներկայացնի դատարան՝ նախքան գործի քննության ավարտը:

Մեկնաբանում

ՀՀ-ում դատարանները վճռով սովորաբար չեն բավարարում փաստաբանի վարձատրության ողջ գումարը և, քանի որ փաստաբանական ծառայությունների վարձատրության չափերը ՀՀ-ում չեն կարգավորվում, և որևէ կոնկրետ չափ սահմանված չէ, հաճախ դատարանները խելամիտ (ողջամիտ) վարձատրության չափը որոշելիս վճռի եզրափակիչ մասում սահմանում են բավական փոքր գումարներ, որոնք նույնպես խելամիտ չափ չեն փաստաբանի մատուցած ծառայության համար:

46 ՀՀ քաղ. դատ. օր.-ի 132-րդ հոդված, 3-րդ մաս

2. Դատական և փորձագետի ծախսեր

ա. **Հարց.** Սույն տիպային վեճի նման գործի դեպքում գործնականում որքան է տվյալ գործը գրանցելու վճարը (միայն ներկայացնելու վճարները):

Պատասխան. Տիպային վեճի դեպքում հայցադիմումը դատարան ներկայացնելու համար դատարանին պետք է վճարվի պետական տուրք: Տվյալ դեպքում, քանի որ պահանջը գույքային պահանջ է, պետական տուրքի չափը հաշվարկվում է հայցագնից (հայցադիմումով պատասխանողից պահանջվող գումարից): Պետական տուրքի չափը առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ներկայացվող հայցադիմումների համար սահմանված է՝ գույքային պահանջով հայցագնի 2% տոկոսի չափով⁴⁷: Պետական տուրքի գումարը ստանդարտ դատական գործով կկազմի 54,486 ՀՀ դրամ (2,724,318 × 2%):

բ. **Հարց.** Որքան է կազմում վկայություն տվող փորձագետի վճարը:

Պատասխան. Փորձագետի կողմից եզրակացություն տալու ծախսերը օրենքով սահմանված չեն: Փորձագիտական կազմակերպություններն իրենց ծախսերը փորձագետների վճարները սահմանում են իրենց հայեցողությամբ: Նման գործի դեպքում ապրանքի որակի ստուգման փորձաքննությունը (ապրանքագիտական փորձաքննությունը) կարող է արժենալ միջինը՝ 30,000-50,000 ՀՀ դրամ: Համաձայն ՀՀ քաղ. դատ. օր.-ի՝ դատարանը փորձաքննություն կարող է նշանակել կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ: Ընդ որում՝ ՀՀ քաղ. դատ. օր.-ը հստակ սահմանում է, որ կողմի միջնորդությամբ նշանակվում է փորձաքննություն, այդ կողմն էլ վճարում է փորձաքննության հետ կապված ծախսերը⁴⁸: Փորձաքննություններ անցկացնելու համար ՀՀ-ում գոյություն ունեն ինչպես մասնավոր, այնպես էլ պետական կազմակերպություններ⁴⁹:

գ. **Հարց.** Ինչ լրացուցիչ վճարներ պետք է վճարի հայցվորը նախապես (բացի հայցադիմումի ներկայացման ծախսերից):

Պատասխան. Հայցվորը նախապես կկատարի նաև հայցադիմումի կազմման, տպագրության, ինչպես նաև տրանսպորտային ծախսեր:

47 «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված, 1-ին մաս, ա) ենթակետ, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82201>

48 ՀՀ քաղ. դատ. օր. 60-րդ հոդված, 1-ին մաս Միաժամանակ 60-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ դատարանի կամ կողմերի նախաձեռնությամբ նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերը կատարվում են *դատական ծախսերի հաշվին*: Իսկ համաձայն ՀՀ քաղ. դատ. օր.-ի 132-րդ հոդվածի 3-րդ մասի՝ դատարանը պարտավոր է վճարի եզրափակիչ մասում լուծել նաև գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցը:

49 Ներկայումս պետական փորձագիտական կազմակերպություններից առավել հայտնի են «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը (<http://www.nbe.am/>) և «ՀՀ Փորձագիտական Կենտրոն» ՊՈԱԿ-ը (<http://www.justice.am/structures/view/structure/23>), որոնց էլ հաճախ պատվիրվում են դատական փորձաքննությունները: Սակայն այս երկու կազմակերպություններն էլ ներկայումս զբաղվածության պատճառով չեն կարողանում ողջամիտ ժամկետներում կատարել դատարանների որոշմամբ նշանակված փորձաքննությունները: Նշենք, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ապրանքագիտական փորձաքննությունների բաժինը ներկայումս բաղկացած է 10 աշխատողից (ներառյալ բաժնի պետ), սակայն բաժնում կա ընդամենը մեկ աշխատող, որը զբաղվում է հենց ապրանքների որակի փորձաքննությամբ: Իսկ «ՀՀ Փորձագիտական Կենտրոն» ՊՈԱԿ-ից վերջերս նույնիսկ գրություն է ուղարկվել ՀՀ դատական համակարգին՝ խնդրելով փորձաքննություններ նշանակելիս փորձաքննությունների անցկացումը չհանձնարարել «ՀՀ Փորձագիտական Կենտրոն» ՊՈԱԿ-ին, քանի որ վերջինս ծանրաբեռնված է: Պետական կազմակերպությունների թվում է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն (<http://www.sarm.am/>), որը կատարում է միայն ստանդարտների համապատասխանության գնահատում:

Սակայն մասնավոր կազմակերպություններին դիմելու դեպքում փորձաքննության ընթացքն ավելի կարճ կարող է տևել: Առևտրային վեճերի դեպքում, օրենքի ուժով, ապրանքի որակի փորձաքննություն անցկացնելու իրավունք ունի նաև ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատը (<http://www.armcci.am>) համաձայն՝ «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի գ. ենթակետի: Մասնավորապես ապրանքագիտական փորձաքննություններն անցկացնում են ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատի կողմից հիմնադրված «Արմէքսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից (<http://expertiza.am/index.php?lang=arm>), որը սակայն ապրանքների որակի ստուգման մասով կատարում է միայն ապրանքի լրիվության և կոմպլեկտայնության փորձաքննություն: Այն փորձաքննություններն անցկացնում է օպերատիվ (փորձաքննությունները տևում են մինչև 1 շաբաթ), ակտիվ համագործակցում է ԴԱՀԿ ծառայության հետ գույքի իրացումից առաջ դրա արժեքի գնահատման հարցերով, սակայն դատավարությունների փուլում ապրանքների որակի փորձաքննության հետ կապված պատվերների ստացման պրակտիկա առկա չէ: Դա նաև իրազեկվածության պակասի հետևանք է:

3. Վճռի կատարման ընդհանուր ծախսեր (ներառյալ վճռի գրանցումը, հրապարակային վաճառքի կազմակերպումը և այլն)

Գումարի բռնագանձման գործերով դատարանի վճռի հիման վրա հարուցված կատարողական վարույթի ընթացքում պահանջատերը (հայցվորը) օրենքով պարտավորություն չունի որևէ վճարում կատարելու: ԴԱՀԿ ծառայության կողմից կատարված կատարողական գործողությունների համար օրենքով ենթակա է վճարման կատարողական ծախս, սակայն կատարողական ծախսերը կատարվում են պարտապանի (պատասխանողի) հաշվին՝ պահում կատարելով վաճառված գույքի գումարից (եթե պատասխանողն ի վիճակի չէ վճարել կատարողական ծախսը):

«ԴԱՀԿ մասին» օրենքով սահմանված է, որ «կատարողական գործողությունների կատարման ծախսերը բռնագանձվում են պարտապանից՝ գույքային բնույթի կատարողական վարույթներով՝ 100.000 դրամ և ավելի չափով պահանջի բավարարմանն ուղղված գումարի, իսկ գույք հանձնելու դեպքում՝ այդ գույքի արժեքի 5 տոկոսի չափով»⁵⁰:

ա. **Հարց.** Որքան են վճիռը գրանցելու ծախսերը:

Պատասխան. Կիրառելի չէ:

Պարզաբանում

ՀՀ-ում դատարանի կայացրած վճռի գրանցման ծախս օրենքով սահմանված չէ:

բ. **Հարց.** Ի՞նչ վճարներ սովորաբար պետք է նախապես կատարի հայցվորը հարկադիր կատարողին կամ հրապարակային սակարկությունների կազմակերպչին:

Պատասխան. Հայցվորը չի վճարում նախապես ոչ մի վճար: Բոլոր վճարները և ծախսերը պահվում են հրապարակային սակարկություններից հետո գույքի վաճառքի գումարից:

գ. **Հարց.** Կան արդյոք վճիռը կատարելու համար այլ վճարներ:

Պատասխան. Ոչ, վճիռը կատարելու համար օրենքով սահմանված այլ վճարներ չկան:

⁵⁰ «ԴԱՀԿ մասին» օրենք, հոդված 67-րդ, 2-րդ մաս, ա. ենթակետ

Դ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ / ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

1. Դատավորների վարձատրությունը

ա. **Հարց.** Արդյոք դատավորների աշխատավարձերի ցուցակները հասանելի են ընդհանուր հանրությանը:

Պատասխան. Այո, դատավորների աշխատավարձերի չափի մասին տեղեկատվությունը հասանելի է հանրությանը, հրապարակային է և սահմանվում է ՀՀ դատական օրենսգրքով⁵¹, որի համաձայն *դատավորի աշխատավարձը բաղկացած է պաշտոնային դրույքաչափից և դրա նկատմամբ սահմանվող հավելավճարներից*: Նշված օրենքով սահմանվում են կոնկրետ դատարանների դատավորների աշխատավարձերի՝ պաշտոնային դրույքաչափերից գերազանցող չափերը, ինչպես նաև, ըստ ունեցած ստաժի, դատավորների աշխատավարձերի բարձրացման կարգը և չափը:

Իսկ դատավորների պաշտոնային դրույքաչափերը սահմանվում են «Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների և մասնագետների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով⁵²:

բ. **Հարց.** Եթե դատավորների աշխատավարձերի ցուցակները հասանելի են հանրությանը, ինչպես է հանրությանը մատչելի դառնում այդ տեղեկատվությունը:

Պատասխան. Դատավորների աշխատավարձերի մասին տեղեկատվությունը հասանելի է www.arlis.am, www.parliament.am պաշտոնական կայքերում, որտեղ հրապարակված են աշխատավարձերի չափը սահմանող վերոնշյալ օրենքները: Իսկ դատավորների լուսանկարները, կենսագրական տվյալները հրապարակված են www.court.am պաշտոնական կայքում:

գ. **Հարց.** Եթե հրապարակայնորեն հասանելի է, որքան է դատավորի աշխատավարձը:

⦿ Սկսնակ դատավորի համար, որն առաջին ատյանում քննում է քաղաքացիական գործեր:

Պատասխան. Առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափն օրենքով սահմանված է 440,000 ՀՀ դրամ⁵³:

⦿ Ամենավագ դատավորի համար բարձրագույն դատական ատյանում (Գերագույն դատարան, Բարձր դատարան):

Պատասխան. ՀՀ-ում դատական բարձրագույն ատյանը ՀՀ Վճռաբեկ դատարանն է: Վճռաբեկ դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը օրենքով ներկայումս սահմանված է 652,212 (440,000 × 48.23%) ՀՀ դրամ: ՀՀ Դատական օրենսգիրքը սահմանում է. «վճռաբեկ դատարանի դատավորների պաշտոնային դրույքաչափերը գերազանցում են ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը 48.23 տոկոսով»⁵⁴:

Միաժամանակ օրենքը սահմանում է առանձին հավելավճարներ դատարանների նախագահների համար: Մասնավորապես դատարանի նախագահը ստանում է դրամական հավելավճար պաշտոնային դրույքաչափի 25 տոկոսի չափով, վճռաբեկ դատարանի պալատի նախագահը՝ պաշտոնային դրույքաչափի 15 տոկոսի չափով⁵⁵:

51 ՀՀ դատական օրենսգիրք, 75-րդ հոդված

52 Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=40974>

53 «Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների և մասնագետների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված: Նշված հոդվածով նախատեսվում է, որ ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքի առանձին հոդվածով: Իսկ այդ թիվը ներկայումս 440,000 ՀՀ դրամ է:

54 ՀՀ Դատական օրենսգիրք, 75-րդ հոդված, 2-րդ մաս, 3-րդ կետ

55 ՀՀ Դատական օրենսգիրք, 75-րդ հոդված, 2-րդ մաս, 4-րդ կետ

դ. **Հարց.** Ինչ այլ արտոնություններից են օգտվում դատավորները:

Պատասխան. Դատավորների օրենքով սահմանված կենսաթոշակի չափն ավելի բարձր է, քան օրենքով սահմանված կենսաթոշակի դրույքաչափը և հաշվարկվում է ոչ թե աշխատանքային տարիների ստաժից, այլ «նշանակվում է պաշտոնավարման վերջին 1 տարվա ընթացքում որպես դատավոր զբաղեցրած պաշտոնի համար ստացած միջին աշխատավարձի ընդհանուր գումարի և 0.9 արտադրյալի 55 տոկոսի չափով»⁵⁶:

Դատավորների համար օրենքով սահմանված տարեկան հանգստի տևողությունն ավելի երկար է⁵⁷: Դատավորներն ունեն ամենամյա հերթական արձակուրդի իրավունք մինչև 30 աշխատանքային օր տևողությամբ⁵⁸:

Դատավորներն օրենքի համաձայն ունեն իրենց աշխատակազմը, աշխատասենյակը, պաշտոնավարման ողջ ժամկետի ընթացքում ազատվում են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից, անվտանգության ապահովման նպատակով ունեն հաշվեցուցակային զենք և պաշտպանության այլ միջոցներ պահելու և կրելու իրավուք: Դատավորը և նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության հատուկ պաշտպանության ներքո: Դատավորն ունի անհապաղ ընդունելության իրավունք ՀՀ արդարադատության նախարարի և վճռաբեկ դատարանի նախագահի մոտ⁵⁹:

2. Դատավարության և վճռի հրապարակայնություն

2.1. Հրապարակայնության մասին օրենք

ա. **Հարց.** Արդյոք կա օրենք կամ օրենքի դրույթ, որով պետությունում ապահովվում է դատավարության և վճռի հրապարակայնությունը:

Պատասխան. Այո, կան օրենքի այդպիսի նորմեր:

Դատական գործերի հրապարակային քննության պահանջը առաջին հերթին սահմանված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ⁶⁰, այնպես էլ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվենցիայով⁶¹ և այլ միջազգային պայմանագրերով, որոնք ՀՀ-ում գործող օրենքների համեմատ ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ:

Համաձայն ՀՀ քաղ. դատ. օր.-ի՝ *դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը դռնբաց է*⁶²:

Օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես որդեգրման գաղտնիությունը, քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու, առևտրային կամ այլ գաղտնիք պահպանելու անհրաժեշտությունից ելնելով դատարանի որոշմամբ գործի քննությունը կարող է անցկացվել դռնփակ նիստում⁶³:

Դատարանի վճիռը բոլոր դեպքերում հրապարակվում է դռնբաց նիստում, բացառությամբ որդեգրման գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտի եզրափակիչ մասի հրապարակման դեպքերի: Նման դեպքում վճռի հրապարակումը կարող է հրապարակվել միայն որդեգրողի համաձայնությամբ⁶⁴:

56 ՀՀ դատական օրենսգիրք, 75.1. հոդված, 1-ին մաս

57 ՀՀ աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն աշխատողների համար ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը սահմանված է 20 աշխատանքային օր: <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80060>:

58 ՀՀ դատական օրենսգիրք, 76-րդ հոդված, 1-ին մաս

59 ՀՀ դատական օրենսգիրք, 79-րդ, 81-րդ, 82-րդ, 84-րդ և 86-րդ հոդվածներ

60 ՀՀ Սահմանադրություն, 18-րդ հոդված, 1-ին պարբերություն, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75780>

61 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվենցիա, 6-րդ հոդված, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20870>

62 ՀՀ քաղ. դատ. օր. 8-րդ հոդված, 1-ին մաս

63 ՀՀ քաղ. դատ. օր. 8-րդ հոդված, 2-րդ և 3-րդ մասեր

64 ՀՀ քաղ. դատ. օր. 8-րդ հոդված, 5-րդ մաս, 2-րդ պարբերություն

- բ. **Հարց.** Արդյոք այդ օրենքը կամ օրենքի դրույթը ընդգրկում է իր մեջ՝
- ազատ մուտք ունենալը նիստերին,
 - ազատ մուտք ունենալը վճիռների կրկնօրինակներին,
 - այլ (հստակեցնել):

Պատասխան. Այո, օրենքի վերոնշյալ դրույթները իրավունք են տալիս հանրության ցանկացած անդամի ներկա գտնվել դատարանի ցանկացած դռնբաց նիստի (այդ թվում՝ վճռի հրապարակմանը):

Քանի որ վճիռները պարտադիր ենթակա են հրապարակման, յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմել դատարան և ստանալ ցանկացած վճռի պատճենը (կրկնօրինակը)՝ վճարելով օրենքով սահմանված պետական տուրքի գումարը⁶⁵:

Բացի այդ առկա է նաև www.datalex.am պաշտոնական կայքը, որտեղ տեղադրվում են բոլոր դռնբաց գործերով վճիռները, ինչպես նաև տեղեկատվություն դատավարության ընթացքի մասին: Իսկ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները հրապարակվում են նաև www.arlis.am⁶⁶ պաշտոնական կայքում, ինչպես նաև՝ ՀՀ ԱՆ «Իրավական ակտերի պաշտոնական տեղեկագրում»⁶⁷:

- գ. **Հարց.** Ինչպիսիք դատական գործեր են ընդգրկվում այդ օրենքի կամ օրենքի դրույթի կիրառման ոլորտում:

Պատասխան. Դատական գործերի և վճիռների հրապարակայնության պահանջը տարածվում է բոլոր տեսակի գործերի վրա (այդ թվում՝ քաղաքացիական գործեր, առևտրային բնույթի վեճերով գործեր, քրեական գործեր, վարչական գործեր, ինչպես նաև սահմանադրական գործեր):

2.2. Մուտք նիստերին

- ա. **Հարց.** Առաջին ատյանի դատարանում կարող է արդյոք հանրությունը ներկա գտնվել երկու մասնավոր կողմերի միջև առևտրային վեճով գործի նիստերին:

Պատասխան. Այո, հանրությունը կարող է ներկա գտնվել երկու մասնավոր ընկերությունների միջև առևտրային վեճով գործի քննության բոլոր նիստերին, եթե, իհարկե, դատարանը որոշում չի կայացրել գործը քննել դռնփակ դատական նիստում՝ ելնելով առևտրային կամ այլ գաղտնիք պահպանելու անհրաժեշտությունից:

2.3. Վճիռների պատճենների հասանելիությունը հանրությանը

- ա. **Հարց.** Կարող է արդյոք ցանկացած երրորդ անձ (ներառյալ լրագրող) ստանալ երկու մասնավոր կողմերի միջև առևտրային վեճի գործով վճռի պատճենը:

Հարց. արդյոք բոլոր դատական որոշումներն են հասանելի:

Պատասխան. Այո, ներառյալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճիռները, դատավճիռները, վարչական դատարանի վճիռները, վերաքննիչ դատարանների որոշումները, վճռաբեկ դատարանի որոշումները:

Հարց. Եթե հասանելի են, որտեղ կարող են վճիռների պատճենները ձեռք բերել:

Պատասխան. Վճիռների, որոշումների պատճենները կարող են ձեռք բերել դատարանում՝ անմիջապես դատարանի աշխատակազմից կամ համապատասխան կայքերից (վերևում նշված են), ինչպես նաև պաշտոնական տեղեկագրից (ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների դեպքում):

65 «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված, 11-րդ կետ

66 Նույն կայքը հասանելի է նաև հետևյալ դոմեններով՝ www.laws.am, www.legislation.am

67 Տե՛ս <http://www.pashtonakan.am/>: ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների պարտադիր պաշտոնական հրապարակման պահանջը սահմանված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 57.2. հոդվածով: <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64495>

Հարց. Որո՞նք են որոշումների հասանելիության պայմանները:

Պատասխան. Հրապարակայնորեն հասանելի են յուրաքանչյուր անձի համար: Ինտերնետային համապատասխան կայքից կարելի է ստանալ տեքստը, սակայն ոչ սկան տարբերակը (այսինքն՝ առանց դատարանի ստորագրության և կնիքի): Իսկ դատարանի կողմից ստորագրված և կնքված դատական ակտի պատճենը կարելի է ստանալ օրենքով սահմանված կարգով՝ պետական տուրքի գումարը վճարելով⁶⁸:

բ. **Հարց.** Եթե դատական որոշումները հանրությանը հասանելի են, առավելագույնը ի՞նչ վաղեմության պետք է լինի վճիռը, որոշումը, որպեսզի այն հնարավոր լինի ստանալ նշված ձևով (առանց այլ հատուկ տարբերվող ընթացակարգի):

Պատասխան. Օրենքով որևէ սահմանափակում առկա չէ: Սակայն շուրջ 3 տարի անց դատարանները իրենց արխիվում առկա ավարտված գործերը հանձնում են համապատասխան դատական ակտերի ընդհանուր արխիվ: Այս դեպքում վճռի պատճենը ստանալու դիմում տալիս պատճենը ստանալու ընթացակարգը փոքր-ինչ երկար կտևի: Սակայն դատական վճիռները, որոշումները էլեկտրոնային տարբերակով համապատասխան կայքերից ստանալու դեպքում ընթացակարգի տարբերություն չկա: Էլեկտրոնային տարբերակով դատական վճիռների, որոշումների պահպանման առավելագույն ժամկետ ևս սահմանված չէ, և դրանք մուտքագրվում են համակարգ անժամկետ: Սակայն ՀՀ-ում դատական վճիռները, որոշումները սկսել են ինտերնետային կայքերում հրապարակվել վերջին տարիներին միայն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ:

68 Տե՛ս «Դատավարության և վճռի հրապարակայնությունը» բաժինը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ


Ուսումնասիրության արդյունքներով կարելի է եզրակացնել, որ ընդհանուր առմամբ ՀՀ իրավական և դատական համակարգը հնարավորություն է տալիս առևտրային ընկերություններին ծագած առևտրային վեճերով դիմել դատարան, անցկացնել գործի քննություն և ստանալ վեճի ըստ էության լուծում, ինչպես նաև՝ ապահովել կայացված վճռի կատարումը: Սակայն միևնույն ժամանակ կան խնդիրներ, որոնք ունեն լուծման կարիք, և որոնց լուծման արդյունքում ՀՀ-ի դիրքը «Doing Business» ամենամյա զեկույցի «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչի վարկանիշային աղյուսակում կարող է բարելավվել: Դրան զուգահեռ ավելի դյուրին կդառնա ՀՀ-ում առևտրային բնույթի վեճերի քննության, լուծման և վճռի կատարման գործընթացը:

«Doing Business» ծրագրի կողմից առաջարկվող ստանդարտ առևտրային վեճի համար նախատեսված ենթադրությունները և պայմանները հնարավոր է տեղայնացնել ՀՀ իրավական և դատական համակարգում, և դրա հիման վրա գտնել ՀՀ-ում նման գործեր քննող դատարաններ, դատարանում առևտրային բնույթի վեճերի քննության ընթացակարգերը, ժամկետները, հայցվորի հնարավոր ծախսերը, վեճի լուծման արդյունքում վճռի կատարման ժամկետները և այլն: Նշված առևտրային վեճի գումարը (հայցագնի արժեքը) ըստ «Doing Business» ծրագրի «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչի մեթոդաբանության և հարցաշարի կազմում է 2,724,318 ՀՀ դրամ:

ՀՀ-ի իրավական և դատական համակարգում վերջին տարում՝ 01.06.2012թ. հետո առևտրային բնույթի վեճերի լուծման դյուրինության աստիճանի բարձրացման ուղղությամբ բարեփոխումներ չեն եղել: Սակայն կան սպասվող բարեփոխումներ, որոնք դեռ պետք է իրագործվեն ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 3-րդ փուլի շրջանակներում՝ համաձայն ՀՀ նախագահի կողմից 30.06.2012թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա Կարգադրության:

Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. Ծրագրով նախատեսվում են բարեփոխումներ, ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսդրությունում, այնպես էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությունում, ինչի արդյունքում կարող է բարձրանալ քաղաքացիական գործերի, այդ թվում՝ առևտրային վեճերի քննության օբյեկտիվությունը, արդյունավետությունը և արագությունը, ինչպես նաև ՀՀ դատական համակարգի նկատմամբ վստահությունը:

Ներկայումս ՀՀ-ում մասնագիտացված առևտրային կամ տնտեսական դատարան գոյություն չունի⁶⁹: Ծագող առևտրային վեճերը քննվում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից, որոնք միաժամանակ քննում են քաղաքացիական բազմաբնույթ գործեր (օրինակ՝ ժառանգական, հողային, աշխատանքային, ամուսնաընտանեկան և այլն), ինչպես նաև քրեական գործեր: ՀՀ-ում գոյություն ունեն թվով 16 առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ, որոնցից 7-ը՝ Երևան քաղաքում: ՀՀ դատական համակարգում գործում են նաև մեկ մասնագիտացված վարչական դատարան, երեք վերաքննիչ մասնագիտացված դատարաններ և մեկ վճռաբեկ դատարան: ՀՀ դատական համակարգը եռաստիճան է: Ստորև ներկայացվում է ՀՀ դատական համակարգը՝ սխեմայով.



69 Նախկինում ՀՀ-ում գործում էր տնտեսական դատարան, որը քննում էր առևտրային բնույթի վեճեր, սակայն այդ դատարանը վերացվեց 2007թ.: 28.11.2007թ. ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվեց «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, որի 74-րդ հոդվածի համաձայն ուժը կորցրած ճանաչվեց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4⁻րդ բաժինը (ՎԱԲՈՒՅԹԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ): Նշված օրենքը տես այստեղ՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=40949>

ՀՀ-ում նախկինում արդեն իրականացված դատական և իրավական բարեփոխումների ընթացքում ձևավորվել է նվազագույն օրենսդրություն, որով կարող է կարգավորվել ստանդարտ առևտրային վեճի քննությունը և լուծումը, ինչպես նաև կայացված վերջնական դատական ակտի հարկադիր կատարումը (ՀՀ քաղ. օր., ՀՀ քաղ. դատ. օր., ՀՀ դատական օրենսգիրք, «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենք, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք և այլն):

Դատավարարության ընթացակարգն ըստ «Doing Business» ծրագրի տարանջատվում է երեք հիմնական փուլերի, ինչը թույլ է տալիս ավելի մանրամասն նկարագրել առևտրային վեճի քննության և լուծման ընթացքը, օրենսդրությունը և պրակտիկան (այդ թվում՝ ժամկետները, ծախսերը և կատարվող գործողությունների թիվը): Այդ փուլերն են՝

1. Ծագած առևտրային վեճից հետո վաճառող ընկերության կողմից հայցադիմումի լրացումը, ներկայացումը և դատարանի կողմից հարուցված հայցի հիման վրա դատական առաջին ծանուցումը:
2. Առաջին ատյանի դատարանում դատավարությունը և վճռի կայացումը:
3. Դատարանի կողմից կայացված և արդեն ուժի մեջ մտած վճռի կատարումը:

ՀՀ-ում դեռ ներդրված չէ հայցադիմումների էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգ: Սակայն Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. Ծրագրով նախատեսվում է բարելավել դատարաններում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը՝ ներդնելով նաև հայցադիմումները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորությունը⁷⁰:

Դատական ծանուցումների ընթացքում ՀՀ-ի իրավակիրառ պրակտիկայում ծագում են մի շարք խնդիրներ, որոնց պատճառով չի ապահովվում դատավարության մասնակցի (մասնավորապես պատասխանողի) պատշաճ ծանուցումը, անհարկի հետաձգումների կանխումը, փորձաքննությունների արագ անցկացումը և այլն, ինչն էլ իր հերթին խոչընդոտում է դատավարության ընթացքը և ազդում վերջինիս տևողության վրա: Ստանդարտ առևտրային վեճի քննության դեպքում կարևորվում են դատական ծանուցումն ստանալու ժամկետները, գործի քննության հետաձգման հնարավոր պատճառները, հետաձգումների դեպքում նիստերի միջև ընկած ժամանակահատվածը, մինչև դատավարության ավարտը դատական նիստերի հնարավոր ընդհանուր թիվը և այլն: Դատավարության անցկացման և վճռի կայացման փուլում պրակտիկայում ծագող խնդիրները մեծապես պայմանավորված են դատավարական ծանուցումների կարգի, գործի քննության հետաձգման հիմքերի, փորձաքննության անցկացման գործընթացի և այլ կարևորագույն հարցերի օրենսդրական կարգավորման ոչ բավարար արդյունավետ մակարդակով:


Վճռի կատարման փուլի ընթացքում վճիռը կամովին կատարելու համար օրենքով ժամկետ սահմանված չէ: ՀՀ-ում օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա արգելանք կիրառող և գույքի բռնագանձում իրականացնող պետական մարմինը ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունն է: Դատական ակտերի հարկադիր կատարման վարույթների ընթացքում կատարողական գործողությունների համար թեև սահմանված է առավելագույն ժամկետ (երկու ամիս), սակայն այդ ժամկետի մեջ չեն հաշվարկվում պատասխանողի գույքի հարկադիր աճուրդային գործընթացում գտնվելու, գույքն ուղղակի վաճառքով իրացնելու, պարտապանի կամ նրա գույքի հետախուզման, ինչպես նաև կատարողական վարույթի հետաձգման կամ կասեցման ժամկետները: Սակայն պատասխանողի գույքի հարկադիր աճուրդի կայացման և գույքի վաճառքի արդյունքում ստացված գումարի հաշվին հայցվոր առևտրային ընկերության կողմից իր մատակարարված ապրանքի դիմաց վճարման ենթակա գումարը ստացվում է սեղմ ժամկետներում:

Հարկ է նշել, որ վճռի կատարման փուլում ՀՀ-ում արդեն ներդրվել է էլեկտրոնային հրապարակային ծանուցումների համակարգը, ինչը թույլ է տալիս արագացնելու դատական ակտի հարկադիր կատարման վարույթը, սակայն այնուհանդերձ, խնդիրներ են առաջանում պարտապանին գույքի իրացումից առաջ ծանուցելու, ինչպես նաև առանձին գույքերի դեպքում գնորդ գտնելու հարցում:



70 Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թ. Ծրագրի 3.11-րդ կետ

ՀՀ-ում ստանդարտ առևտրային վեճի ծագումից և դատարանում հայցի հարուցումից հետո՝ մինչև դատարանի կողմից կայացված վճռի կատարում ստանալը սխեմայով՝

1. Հայցի հարուցում, դատավարություն և վճիռ



2. Վճռի կատարում



2,724,318 ՀՀ դրամ արժողությամբ ստանդարտ առևտրային վեճի քննության հետ կապված վաճառող ընկերության համար հնարավոր ծախսերն են՝ տեղական իրավաբանական գրասենյակի կողմից փաստաբանական ծառայության մատուցման համար սահմանվող միջին վճարը, հայցադիմումը դատարան ներկայացնելու համար օրենքով սահմանված պետական տուրքը, ապրանքագիտական փորձաքննության անցկացման միջին վճարը: Իսկ դատական ակտի հարկադիր կատարման փուլում հայցվորը ծախսեր չի կրում: Այդ ծախսերը կատարվում են պարտապանի (պատասխանողի) հաշվին:

Հայտնի է, որ պետությունում գործերի քննության հրապարակայնության սկզբունքի և դատարանների թափանցիկության առկայությունը հնարավորություն է տալիս ապահովել հասարակական վերահսկողություն դատական համակարգի և դատավարությունների նկատմամբ, ինչն էլ իր հերթին նպաստում է գործերի քննության օրինականության և արդյունավետության բարձրացմանը: ՀՀ-ում դատավորների աշխատավարձի մասին տեղեկատվությունը հրապարակային է և սահմանված է օրենքով: Դատավորների աշխատավարձերը, առաջին, վերաքննիչ և վճռաբեկ ատյանների դատարանների դատավորների համար, տարբեր են՝ ըստ պաշտոնային դրույքաչափերի: Օրենքով սահմանված է նաև դատավորների աշխատավարձերի հավելումների կարգը և չափերը: ՀՀ-ում դատավորներն օրենքի հիման վրա օգտվում են նաև այլ արտոնություններից: Դատական նիստերին ցանկացած անձի համար ստեղծված է ազատ մուտք ունենալու հնարավորություն, բացառությամբ օրենքով սահմանված դռնփակ դատավարությունների անցկացման դեպքերի: Վճիռները նույնպես հրապարակային են, իսկ ուժի մեջ մտած վճիռների պատճեններին ցանկացած քաղաքացի կարող է մուտք ունենալ համացանցի միջոցով կամ դրանք ստանալ դատարանից՝ վճարելով համապատասխան պետական տուրք:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ «Գործարարությամբ զբաղվելը 2013, Հայաստան» զեկույցում «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչի մասով նշված 49 ընթացակարգային քայլերից ոչ բոլորն են կիրառելի ՀՀ-ում: Մասնավորապես այդ ընթացակարգային քայլերից թվով 18-ը կիրառելի չեն ներկայումս գործող ՀՀ օրենսդրության և պրակտիկայի պայմաններում, իսկ կատարվող ծախսերն ավելի քիչ են: Սակայն ժամանակի տևողությունը մի փոքր ավելի է. ունեցած պրակտիկայի և գործող օրենսդրության համաձայն կատարած հաշվարկների արդյունքում ստացվել է, որ ՀՀ-ում ստանդարտ առևտրային վեճով պատասխանողի դեմ դատարան դիմելու, դատավարության և վճռի կայացման, ինչպես նաև վճռի կատարման տևողությունը կազմում է 2ուրք 467 օր (այդ թվում՝ 43 օր դատարան դիմելը և պատասխանողին ծանուցելը, 308 օր՝ դատավարությունը և վճիռը, 116 օր՝ հարկադիր կատարում), ծախսերը կազմում են հայցագնի՝ 2,724,318 ՀՀ դրամի մոտ 12.3 տոկոսը կամ 334,486 ՀՀ դրամ (այդ թվում՝ 250,000 իրավաբանական ծառայության միջին վճար, 54,486 ՀՀ դրամ պետական տուրք (հայցագնի 2 տոկոսը) և 30,000 վաճառված ապրանքի ապրանքագիտական փորձաքննության միջին ծախս), իսկ ընթացակարգային քայլերը թվով 31-ն են:

Հայաստանի վերաբերյալ «Գործարարությամբ զբաղվելը 2013» զեկույցում՝ «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչի մասով ներկայումս հրապարակված տվյալների և ուսումնասիրության արդյունքներով արձանագրված տվյալների համեմատական աղյուսակ

Ներկայումս «Գործարարությամբ զբաղվելը 2013» զեկույցում հրապարակված վիճակը		Ուսումնասիրության արդյունքներով արձանագրված տվյալները	
Ժամանակ	440 օր	Ժամանակ	467 օր
Դատարան դիմելը և պատասխանողին ծանուցելը	20	Դատարան դիմելը և պատասխանողին ծանուցելը	43 օր
Դատական քննություն և վճիռ	300	Դատական քննություն և վճիռ	308 օր
Վճռի կատարում	120	Վճռի կատարում	116 օր
Ծախսեր	19%	Ծախսեր	12,3%
Ընթացակարգային քայլերի թիվ	49	Ընթացակարգային քայլերի թիվ	31

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առևտրային բնույթի վեճերի դեպքում օրենքով սահմանել գույքային պահանջի որոշակի շեմ, որի դեպքում վեճերը կարող են քննվել անմիջապես վերաքննիչ ատյանում՝ շրջանցելով առաջին ատյանի դատարանը:

Դա կարող է կարճացնել առևտրային վեճի քննության տևողությունը և ապահովել կողմին՝ իր գործը ողջամիտ ժամկետում քննելու իրավունքը: Սակայն նման դեպքում անհրաժեշտ կլինի նաև օրենքով սահմանել, որ վեճերը անմիջապես ատյանում նման կարգով առևտրային վեճի քննությունից հետո կողմի բերած վճռաբեկ բողոքները, առանց վերապահումների, ենթակա են վարույթ ընդունման: Ներկայումս ՀՀ Վճռաբեկ դատարանը ոչ բոլոր գործերն է վարույթ ընդունում, իսկ առևտրային վեճի կողմերը չպետք է գրկված լինեն իրենց գործը կրկին քննելու իրավունքից, եթե նրանց գործը քննվել է անմիջապես վերաքննիչ ատյանում:

2. Օրենքով ներդնել և զարգացնել գործերի էլեկտրոնային կառավարման համակարգ:

Հայցադիմումները էլեկտրոնային եղանակով ներկայացնելը կարող է խնայել ժամանակ և ռեսուրսներ թե՛ կողմի և թե՛ դատարանի համար: Հայցադիմումների էլեկտրոնային եղանակով ներկայացման դեպքում հարցեր կարող են ծագել կից փաստաթղթերի (ներառյալ գործով ապացույցների) ներկայացման կարգի վերաբերյալ: Կարելի է սահմանել այդ փաստաթղթերի սկանավորված տարբերակով ներկայացման հնարավորություն՝ հետագայում բնօրինակները դատարանին ներկայացնելու պայմանով: Հայցադիմումները էլեկտրոնային եղանակով ներկայացնելուց զատ անհրաժեշտ է ներդնել և զարգացնել նաև էլեկտրոնային եղանակով դատավարության մասնակիցներին ծանուցելու հնարավորությունը, ինչի ուղղությամբ ՀՀ-ում արդեն որոշ քայլեր կատարվել են⁷¹:

Զարգացնել գործերի էլեկտրոնային մակագրության համակարգը: Ներկայումս առաջին ատյանի որոշ դատարաններում արդեն իսկ ներդրվել է գործերի էլեկտրոնային մակագրության համակարգը, սակայն անհրաժեշտ է զարգացնել և ներդնել բոլոր դատարաններում: Դա նպաստում է կոռուպցիոն ռիսկերի նվազմանը, գործերի արագ մակագրմանը և դատավորների ներքին անկախության բարձրացմանը (քանի որ ներկայումս այն դատարաններում, որտեղ դեռ ներդրված չէ մուտքագրվող գործերի էլեկտրոնային մակագրության համակարգ, գործերը մակագրում է դատարանի նախագահը՝ անձամբ որոշելով, թե որ գործը որ դատավորը կքննի):

3. Օրենքի ուժով մասնագիտացված առևտրային դատարանի ստեղծում:

Նման դատարանի ստեղծումը կարող է բերել առևտրային բնույթի գործերի ավելի արդյունավետ և արագ քննության: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ առանձին, լայն ոլորտներին վերաբերող և ավելի նեղ մասնագիտական գիտելիքներ պահանջող վեճերով դատարանների և/կամ դատավորների մասնագիտացումը արդարացված է: Նման մասնագիտացումը նպաստում է գործի արդյունավետ, լրիվ, բազմակողմանի և ողջամիտ ժամկետում քննությանը⁷²:

Ստեղծման դեպքում առևտրային դատարանը կարող է բավական հագեցած լինել գործերով, և դրա պահանջն իրականում կա և՛ տնտեսության և՛ հասարակության մեջ, քանի որ տնտեսական հարաբերությունները տարեց տարի զարգանում են, առաջ են գալիս նոր և բարդ մասնավոր առևտրային հարաբերություններ, որոնցից ծագող վեճերը պահանջում են ձեռնարկատիրական, առևտրային իրավահարաբերությունները կարգավորող բազմաթիվ միջազգային պայմանագրերի, օրենքների, նորմատիվ իրավական այլ ակտերի լավ իմացություն՝ համապատասխան վեճերը քննելիս և լուծելիս: Առևտրային դատարանի ստեղծումը կարող է նպաստել նաև առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի իրավական գիտակցության բարձրացմանը, վերջիններիս կողմից (այդ թվում օտարերկրյա ներդրողների կողմից) ՀՀ դատական համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը, ինչը կարող է բերել օտարերկրյա ներդրումների աճին, պետության ներսում գործարար հարաբերությունների զարգացմանը և այլն:

Առևտրային դատարանի ստեղծման դեպքում կարելի է սահմանել առևտրային վեճերի քննության համար դատական *երկաստիճան համակարգ*. այսինքն առևտրային դատարանի վճիռները, որոնք քննվել են արդեն մասնագիտացված դատավորների կողմից, կարող են բողոքարկվել անմիջապես ՀՀ վճռաբեկ դատարան, այլ ոչ թե՛ ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան: Նման դեպքում կկրճատվեն նաև առևտրային վեճերի քննության

71 Տե՛ս Ձեկույցի «Տեղեկատվություն բարեփոխումների վերաբերյալ» բաժնի 2-րդ կետը, «Դատավարությունը և վճիռը» բաժնի «գ» հարցի պատասխանը:

72 ՀՀ-ում ներկայումս գոյություն ունի մեկ մասնագիտացված դատարան՝ ՀՀ վարչական դատարանը, որը ստեղծվել է 2007թ.-ին: Հետո ստեղծվել է նաև ՀՀ վարչական վերաքննիչ դատարան՝ երկու կազմով, յուրաքանչյուրը բաղկացած 3 դատավորից: Անցած 5 տարիների ընթացքում իրավակիրառ պրակտիկան ապացուցեց վարչական դատարանի կենսական անհրաժեշտությունը հասարակության, ինչպես նաև իրավական պետության կայացման համար: Չնայած այդ դատարանը մասնագիտացված դատարան է և քննում է միայն հանրային իրավահարաբերություններից ծագող վեճեր, այն մշտապես եղել է խիստ ծանրաբեռված և 2013թ.-ին սպասվում է համարում մինչև 12 դատավորներով:

ժամկետները: *Այս մոդելով առևտրային դատարանի ստեղծման դեպքում սույն առաջարկությունների 1-ին կետը այլևս կիրառելի չի լինի*: Սակայն այդ դեպքում նույնպես պետք է ուշադրություն դարձվի այն հարցին, որ առևտրային վեճի կողմերը զրկված չլինեն իրենց գործը կրկին քննելու իրավունքից, եթե նրանց գործը քննվել է միայն մեկ ատյանում, ապա ՀՀ վճռաբեկ դատարանը բերված վճռաբեկ բողոքներն ընդունի վարույթ և գործը կրկին քննի, եթե կողմը բողոքարկում է դատական ակտը:

Միաժամանակ առևտրային դատարան ստեղծելու հարցը դիտարկելիս պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ՀՀ դատական համակարգում կան համակարգային խնդիրներ, և անկախ դատարանի մասնագիտացումից՝ դատարանների արդյունավետությունը կարող է մնալ նույնը: Ուստի անհրաժեշտ կլինի այդպիսի դատարան ստեղծելիս զուգահեռաբար օրենքի ուժով ապահովել այնպիսի պայմաններ, որ առևտրային դատարանը չկրի զուտ ձևական բնույթ և նպաստի առևտրային վեճերով արդարադատության որակի բարձրացմանը:

Միջազգային պրակտիկայում առևտրային վեճերի լուծման ժամանակ մասնագիտացում ապահովելու համար տարածում է գտել ևս մեկ մոդել: Այդ մոդելի ներդրման դեպքում պետության դատական համակարգում չի ստեղծվում նոր մասնագիտացված առևտրային դատարան, սակայն առկա դատարանների կազմում ստեղծվում է առանձին բաժանում, որի դատավորները մասնագիտացված են և քննում են միայն առևտրային վեճեր:

Հարկ է նշել նաև, որ առևտրային վեճերով մասնագիտացում ապահովելու համար նախ անհրաժեշտ կլինի սահմանել «առևտրային վեճ» կամ «տնտեսական վեճ» հասկացությունը, որպեսզի հստակ լինի, թե որ գործերն են քննվելու առևտրային դատարանում կամ դատարանի առևտրային վեճեր քննող բաժանմունքում: Բացի առևտրային սուբյեկտների միջև իրենց առևտրային գործունեության հետ կապված ծագող վեճերից, կարելի է դիտարկել նաև առևտրային սուբյեկտների և պետության միջև ծագած՝ տվյալ առևտրային սուբյեկտի առևտրային գործունեության հետ կապված վեճերը ևս «առևտրային վեճ» հասկացության մեջ ներառելու հարցը:

4. Վճիռների և դատավարությունների հրապարակայնության բարձրացում օրենքով.

Ներդնել դատավարությունների տեսաարձանագրության (տեսաձայնագրության) համակարգ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման համակարգի ներդրումը կարող է բավական ծախսատար լինել պետության համար, կարելի է նախապես ներդնել *դատական նիստերի տեսահսկման* համակարգ առանց տեսագրության, այնուհետև հնարավորություն տալ հասարակությանը ուղիղ հեռարձակման համակարգի միջոցով հետևելու դատավարություններին: Նման դեպքում արդեն առկա www.datalex.am տեղեկատվական համակարգում պետք է հնարավորություն տալ հասարակությանը ուղիղ միացման միջոցով հետևելու գործի քննությանը, և այդպիսով «ներկա գտնվել» դռնբաց դատական նիստերին, բացառությամբ, իհարկե, այն գործերի, որոնց վերաբերյալ դատարանը կայացրել է որոշում գործը դռնփակ նիստերով քննելու մասին: Դա հնարավորություն կտա հենց գործով կողմ հանդիսացող անձանց (այդ թվում առևտրային ընկերություններին) ևս առանց դատարան այցելելու հետևել իրենց մասնակցությամբ գործի քննության ընթացքին, եթե տվյալ նիստով գործի քննությունը հնարավոր է առանց տվյալ կողմի մասնակցության: Միաժամանակ նման փոփոխությունների արդյունքում հնարավոր կլինի բարձրացնել դատավարությունների և դատարանների նկատմամբ հասարակական վերահսկողության աստիճանը՝ այդպիսով ապահովելով դատարանների կողմից դատավարությունների առավել պատշաճ և օրինական անցկացումը:

Հարկ է նշել, որ ներկայումս կան պետություններ, որտեղ արդեն իսկ ներդրվել է տեսաարձանագրությունների համակարգ⁷³ (օրինակ՝ Կորեայի Հանրապետություն, Մալայզիայի Հանրապետություն և այլն), իսկ Ռուսաստանի Դաշնության Արբիտրաժային դատարանում (ՌԴ տնտեսական դատարան) ներդրվել է նաև տեսանիստերի համակարգ, ինչը թույլ է տալիս կողմերին մասնակցել նիստերին առանց որևէ տրանսպորտային ծախս կատարելու⁷⁴:

73 http://www.doingbusiness.org/reports/global-reports/~/_media/GIAWB/Doing%20Business/Documents/Annual-Reports/English/DB12-Chapters/Enforcing-Contracts.pdf: «Գործերի կառավարման համակարգերի և ավտոմատացման ներդրում» բաժին, արկղ 1, արկղ 2:

74 Նույն տեղում՝ «Գործերի կառավարման համակարգերի և ավտոմատացման ներդրում» բաժին

5. Կատարելագործել դատական ծանուցումների առձեռն տրամադրման համակարգը.

Դատավարության մասնակիցների համար օրենքով հնարավորություն ստեղծել, որպեսզի իրենց միջնորդության հիման վրա պատասխանողին կամ գործին մասնակցող այլ անձանց հասցեագրված դատական ծանուցագրերը դատարանի կողմից ուղարկվեն իրենց ընտրած կապի կազմակերպության միջոցով՝ այդ կապի կազմակերպության համապատասխան վճարները վճարելու պայմանով: Նման կարգի նախատեսումը արդյունավետ կարող է լինել այն դեպքում, երբ դատական նիստի ժամանակի և վայրի մասին դատական ծանուցագիրը պատասխանողի կամ գործին մասնակցող այլ անձանց կողմից չեն ստացվում, հստակ հայտնի չեն հասցեատիրոջ կողմից ծանուցագրի չստացման պատճառները, և կան ողջամիտ կասկածներ, որ պատասխանողը խուսափում է դատական ծանուցագիրը ստանալուց և/կամ պատասխանողն ընդհանրապես չի տեղեկացվել փոստային բաժանմունքից, որ իրեն հասցեագրված փոստային առաքանի կա⁷⁵:

Այս առաջարկի ընդունման դեպքում անհրաժեշտ կլինի սահմանել համապատասխան կարգ՝ այլ կապի կազմակերպությունների կողմից դատական ծանուցագրերը դատարանից ստանալու և հասցեատերերին հանձնելու վերաբերյալ, որում կճշտվեն նաև կապի տվյալ կազմակերպությանը դատավարության մասնակցի կողմից վճարում կատարելու եղանակը և այլն:

Նման կարգ նախատեսելու դեպքում հնարավոր կլինի էականորեն կրճատել դատավարությունների տևողությունը, քանզի հաճախ դրանք ձգձգվում են հենց պատասխանողների պատշաճ ծանուցումն ապահովված չլինելու պատճառով:

6. Կատարելագործել և հստակեցնել դատարանի կողմից նշանակվող և անցկացվող փորձաքննությունների կարգը.

Քանի որ ստանդարտ առևտրային վեճի ենթադրություններում նախատեսվում է նաև մատակարարված ապրանքների ապրանքագիտական փորձաքննության անցկացում՝ պարզելու համար ապրանքի համապատասխանությունը առք ու վաճառքի պայմանագրի պայմաններին, ապա շատ կարևոր է նաև փորձաքննությունների նշանակման և անցկացման ընթացակարգի կատարելագործումը: Առավել ևս, որ ՀՀ դատարաններում այսօր դատավարությունների ժամկետների վրա մեծապես ազդում է փորձաքննությունների անցկացման և եզրակացության ստացման տևողությունը: Հաճախ ՀՀ դատարանները փորձաքննություն նշանակելիս անորոշ ժամկետով կասեցնում են քաղաքացիական գործի վարույթը՝ հաշվի առնելով, որ պրակտիկայում անցկացվելիք փորձաքննությունը կարող է տևել ամիսներ, իսկ երբեմն էլ՝ մինչև մեկ տարի և ավելի: Փորձաքննությունների տևողության վրա ազդող գործոններից են հատկապես գոյություն ունեցող պետական փորձագիտական կազմակերպությունների ծայրաստիճան զբաղվածությունը, ռեսուրսների սակավությունը, ինչպես նաև այլ փորձագիտական կազմակերպությունների մասին դատավարության մասնակիցների իրազեկվածության կամ վստահության պակասը: Այս կապակցությամբ առաջարկվում է, որպեսզի ստեղծվի համապատասխան ինտերնետային կայքէջ, որտեղ կտեղադրվի բոլոր փորձագիտական կազմակերպությունների մասին անհրաժեշտ տեղեկատվություն, ներառյալ՝ առաջարկվող փորձաքննությունների տեսակների, սակագների, ժամկետների վերաբերյալ: Ինչպես նաև անհրաժեշտ է ստեղծել պայմաններ, որպեսզի հնարավորինս բացառվեն ապրանքագիտական փորձաքննությունների նշանակման ժամանակ դատարանի կողմից գործի վարույթը կասեցնելու դեպքերը, և ընդամենը գործի քննությունը հետաձգվի ողջամիտ ժամկետով:

Անհրաժեշտ է նաև օրենքի մակարդակով հստակեցնել փորձագիտական եզրակացությունների թույլատրելիության կանոնները, և հստակ սահմանել, որ հայցվորի կամ պատասխանողի կողմից իր սեփական նախաձեռնությամբ պատվիրված արտադատական փորձաքննության եզրակացությունը (որը չի նշանակվել դատարանի կողմից) օրենքի իմաստով ևս համարվում է փորձագիտական եզրակացություն: Սա կխնայի նաև ժամանակ, քանի որ հայցվորները մինչև առաջին դատական նիստի կայանալը արդեն կկարողանան պատվիրել փորձաքննություն՝ վստահ լինելով, որ դա միանշանակ թույլատրելի ապացույց է դիտվելու դատարանի կողմից՝ որպես պատշաճ փորձագիտական եզրակացություն:

75 Գործնականում հաճախ պատահում են դեպքեր, երբ փոստային ծառայության համապատասխան աշխատողը չի ստուգում հասցեատիրոջ անձը և առաքանին հանձնում է այլ անձի: Կամ պատահում են դեպքեր, երբ խիստ ծանրաբեռնվածության պատճառով փոստային բաժանմունքի աշխատակիցները չեն կարողանում կրկին այցելել տվյալ հասցե, եթե տվյալ հասցեում առաջին այցելության ժամանակ որևէ անձ ներկա չի եղել: Հաճախ փոստային ծառայության աշխատակիցները գրություն են թողնում հասցեատիրոջ ողան վրա, որ փոստային բաժանմունքում հասցեատերը նամակ ունի: Հետո առանց բավարար հիմքեր ունենալու, թե հասցեատերը կարդացել է այդ գրությունը, թե՛ ոչ, դատարան են ուղարկում հետծանուցման թերթիկ՝ «չի պահանջվել» նշումով: Նման դեպքերում դատարանի համար անհասկանալի է մնում, թե ի վերջո կողմը իմացել է նամակի մասին, թե ոչ: Վերոնշյալ դեպքերը չեն կարող համարվել պատշաճ ծանուցում: Դրանք ներկայիս փոստային ծանուցումների ժամանակ ծագող խնդիրների մի մասն են:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՏԻՊԱՅԻՆ ՎԵՃԻ ԾԱԳՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՎՃՈՒ ԿԱՏԱՐՈՒՄԸ⁷⁶

ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ, ԲՈՂՈՔ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

- * **Հայցվորի կողմից պատասխանողին դատարան կանչելու միջնորդություն և բողոք ներկայացնելը.** հայցվորը պատասխանողին դատարան կանչելու իր միջնորդությունն ու բողոքը դատարան է ներկայացնում բանավոր կամ գրավոր:
- * **Հայցվորի կողմից դատական ծախսերը վճարելը.** հայցվորը վճարում է դատական տուրքեր, դրոշմատուրքեր կամ ցանկացած տեսակի այլ դատական վճարներ:
- 1 **Դատական գործի գրանցումը.** դատարանի վարչակազմի կողմից գրանցվում է հայցադիմումը կամ դատական գործը: Դա ներառում է հայցադիմումին կամ դատական գործին գրանցման համար տալը:
- * **Դատական գործը համապատասխան դատավորին հանձնելը.** դատական գործը հանձնվում է համապատասխան դատավորին պատահական ընտրության ընթացակարգով՝ ավտոմատացված համակարգով, վարչական հարցերով դատավորի որոշման հիման վրա, դատարանի աշխատակցի միջոցով և այլն:
- 2 **Պատասխանողին դատարան կանչելու միջնորդության և բողոքի ուսումնասիրությունը դատարանի կողմից.** դատավորն ուսումնասիրում է հայցվորի միջնորդությունն ու բողոքը պաշտոնական պահանջների բավարարման մասով:
- * **Դատավորն ընդունում է միջնորդությունն ու բողոքը.** պաշտոնական պահանջները ստուգելուց հետո դատավորը որոշում է կայացնում հայցվորի միջնորդությունն ու բողոքն ընդունելու մասին:
- 3 **Պատասխանողին դատական ծանուցում ներկայացնելու մասին հայցվորի դիմումը.** հայցվորը գրավոր դիմում է ներկայացնում դատարան՝ պատասխանողին դատական ծանուցում ներկայացնելու մասին:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 4 **Դատական ծանուցում ներկայացնելու մասին դատարանի որոշումը.** հայցվորի դիմումի հիման վրա դատավորը որոշում է կայացնում պատասխանողին դատական ծանուցագիր ներկայացնելու մասին:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 5 **Պատասխանողին ծանուցագիր ներկայացնելու համար լիազորված անձին պատասխանողին դատարան կանչելու մասին միջնորդություն և բողոք հանձնելը.** դատավորը կամ դատարանի աշխատակիցը պատասխանողին դատարան կանչելու մասին միջնորդությունը հանձնում է ծանուցման գրասենյակ, ծանուցման հարցերով աշխատակցին կամ լիազորված անձին (նաև հայցվորին)՝ պատասխանողին դատական ծանուցագիր ներկայացնելու համար:
- * **Պատասխանողին դատարան կանչելու մասին միջնորդությունն ու բողոքը փոստով ուղարկելը.** դատարանը կամ դատական կատարածուն, ինչպես նաև մասնավոր կերպով ընթացակարգն ապահովող կարգադրիչը, պատասխանողին դատարան կանչելու մասին միջնորդությունը և բողոքը փոստով ուղարկում են պատասխանողին:
- 6 **Առձեռն առաքման առաջին փորձը.** պատասխանողին դատարան կանչելու միջնորդության և բողոքի առձեռն առաքման առաջին փորձը հիմնականում հաջողվում է:
- 7 **Առձեռն առաքման երկրորդ փորձը.** եթե առաջին փորձը չի հաջողվում, օրենքով կամ ընդունված գործելակերպով պահանջվում է Պատասխանողին դատարան կանչելու միջնորդության և բողոքի առձեռն առաքման երկրորդ փորձը:
- * **Նախքան դատարանի վճիռը գույքի վրա արգելանք դնելու մասին դիմումը.** հայցվորը նախքան դատարանի վճիռը գրավոր դիմում է ներկայացնում պատասխանողի գույքի վրա արգելանք դնելու պահանջով(տես տիպային վեճի 5-րդ ենթակետը):

⁷⁶ Տես՝ <http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia/enforcing-contracts>

- * **Նախքան դատարանի վճիռը գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումը.** դատավորը որոշում է կայացնում պատասխանողին պատկանող գույքի վրա նախքան դատարանի վճիռը արգելանք դնելու մասին հայցվորի պահանջը բավարարելու կամ չբավարարելու վերաբերյալ և իր որոշման մասին տեղեկացնում է հայցվորին ու պատասխանողին: Այս փուլում կարող է պահանջվել, որ հայցվորը պատասխանողին ապահովելու նպատակով տրամադրի երաշխիքներ կամ պարտատոմսեր:
- 8 **Նախքան դատարանի վճիռը գույքի վրա արգելանք դնելը.** պատասխանողին պատկանող գույքի վրա արգելանք է դրվում նախքան դատարանի վճիռը: Արգելանք դնելը ներառում է գույքը առգրավելը կամ ակտիվների գույքագրումը, դրոշմավորումը, պարտագրումը կամ առանձնացումը (տե՛ս տիպային վեճի 5-րդ ենթակետը) :
- 9 **Նախքան դատարանի վճիռը արգելանքի տակ դրված ակտիվներն ի պահ հանձնելը.** պատասխանողին պատկանող՝ արգելանքի տակ գտնվող գույքը ի պահ է հանձնվում հարկադիր կատարողին կամ մասնավոր կերպով ընթացակարգն ապահովող կարգադրիչին (տե՛ս տիպային վեճի 5-րդ ենթակետը):
ԿՐԿՆՎՈՒՄ Է ԵՎ ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 10 **Նախքան դատարանի վճիռը գույքի վրա արգելանք դնելու մասին զեկուցագիրը.** հարկադիր կատարումն ապահովող դատարանի աշխատակիցը կամ մասնավոր կերպով ընթացակարգն ապահովող կարգադրիչը դատավորին ներկայացնում է զեկուցագիր պատասխանողի գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ(տե՛ս տիպային վեճի 5-րդ ենթակետը):
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 11 **Նախքան դատարանի վճիռը գույքի վրա արգելանք դնելու հարցի վերաբերյալ լսումները.** նախքան դատարանի վճիռը պատասխանողի գույքի վրա արգելանք դնելու հարցը լուծելու նպատակով անցկացվում են լսումներ: Այդ գործընթացը կարող է ներառել առանձին միջնորդությունների և խնդրագրերի ներկայացումը (տե՛ս տիպային վեճի 5-րդ ենթակետը) :

ՊԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՃԻՐԸ

- * **Պատասխանողի կողմից պատասխանատվությունից ազատվելու նախնական հիմքերի ներկայացումը.** պատասխանողը պատասխանատվությունից ազատվելու նախնական հիմքերը ներկայացնում է դատարան: Պատասխանատվությունից ազատվելու նախնական հիմքերը տարբերվում են գործի հանգամանքների վերաբերյալ պատասխաններից: Պատասխանատվությունից ազատվելու նախնական հիմքերն են՝ հայցային վաղեմությունը, ընդդատությունը և այլն:
- * **Հայցվորի պատասխանը պատասխանատվությունից ազատվելու նախնական հիմքերին.** հայցվորը պատասխանում է պատասխանողի կողմից ներկայացված պատասխանատվությունից ազատվելու նախնական հիմքերին:
- 12 **Պատասխանատվությունից ազատելու նախնական հիմքերի առնչությամբ դատավորի որոշումը.** դատավորը գործի հանգամանքներից անկախ պատասխանատվությունից ազատելու նախնական հիմքերի առնչությամբ որոշում է կայացնում:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 13 **Հայցվորի հայցադիմումին պատասխանողի կողմից ներկայացված պաշտպանությունը կամ պատասխանը.** պատասխանողը ներկայացնում է գրավոր հիմնավորումներ, որոնք ներառում են գործի հանգամանքների վերաբերյալ նրա պաշտպանությունը կամ պատասխանը: Պատասխանողի գրավոր պատասխանը կարող է ներառել կամ չներառել վկայի ցուցմունքները, փորձագետի եզրակացությունները, պատասխանողի համար որպես ապացույց հանդիսացող փաստաթղթերը:
- 14 **Պատասխանողի պաշտպանությանը կամ պատասխանին հայցվորի հակադարձելու վերջնաժամկետը.** դատավորը սահմանում է այն վերջնաժամկետը, երբ հայցվորն իրավունք ունի հակադարձելու պատասխանողի պաշտպանությանը կամ պատասխանին:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 15 **Պատասխանողի պաշտպանությանը կամ պատասխանին հայցվորի գրավոր հակադարձը.** հայցվորը գրավոր հիմնավորմամբ պատասխանում է պատասխանողի պաշտպանությանը կամ պատասխանին: Հայցվորի պատասխանը կարող է ներառել կամ չներառել վկաների ցուցմունքները կամ փորձագետի եզրակացությունները:

16 Հիմնավորումներ ներկայացնելը. հայցվորը և պատասխանողը դատարան են ներկայացնում գրավոր հիմնավորումներ և փաստաթղթեր, ինչպես նաև միմյանց են փոխանցում դրանց օրինակները: Հիմնավորումները կարող են ներառել կամ չներառել վկաների ցուցմունքները կամ փորձագետի եզրակացությունները:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ

17 Գործի քննության հետաձգումը. գործի քննությունը հետաձգվում է, եթե կողմերից մեկը կամ երկու կողմերն էլ դիմում և հետաձգում են քննությունը՝ գրավոր հիմնավորումներ ներկայացնելու նպատակով:

* **Դատարանի կողմից անկախ փորձագետ նշանակելը.** դատավորը, կողմերի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, նշանակում է անկախ փորձագետ՝ որոշելու համար, թե արդյոք հայցվորի՝ պատասխանողին մատակարարած ապրանքները որակյալ են, թե ոչ(տե՛ս տիպային վեճի 6-րդ ենթակետը) :

18 Դատարանի կողմից անկախ փորձագետ նշանակելու մասին տեղեկացնելը. դատարանը երկու կողմերին տեղեկացնում է անկախ փորձագետ նշանակելու իր մտադրության մասին(տե՛ս տիպային վեճի 6-րդ ենթակետը) :

* **Դատարանի կողմից նշանակված փորձագետի եզրակացության տրամադրումը.** դատարանի կողմից նշանակված անկախ փորձագետը դատարան է ներկայացնում իր փորձագիտական եզրակացությունը(տե՛ս տիպային վեճի 6-րդ ենթակետը) :

19 Բանավոր լուծման կամ դատական բանավոր քննության պահանջը. հայցվորը դիմում է բանավոր լուծման կամ դատական բանավոր քննության օր նշանակելու համար:

* **Բանավոր լուծման կամ դատական բանավոր քննության օրը նշանակելը.** դատավորը նշանակում է բանավոր լուծման կամ դատական բանավոր քննության օր:

* **Վկաների (փորձագետի) ցանկը.** կողմերը դատարան են ներկայացնում վկաների (փորձագետի) ցանկը(տե՛ս տիպային վեճի 6-րդ ենթակետը):

20 Վկաներին (փորձագետին) դատարան կանչելը. դատարանի կողմից կանչված վկաները (փորձագետը) դատարան են ներկայանում բանավոր լուծման կամ դատական բանավոր քննությանը մասնակցելու նպատակով (տե՛ս տիպային վեճի 6-րդ ենթակետը):

21 Գործի քննության հետաձգումը. գործի քննությունը հետաձգվում է, եթե կողմերից մեկը կամ երկու կողմերն էլ բանավոր լուծման կամ բանավոր դատական քննությանը նախապատրաստվելու նպատակով դիմում և հետաձգում են քննությունը:

22 Բանավոր լուծմանը (գերիշխում են քաղաքացիական իրավունքի համակարգում). կողմերը բանավոր լուծման կամ դատական բանավոր քննության ժամանակ դատավորին ներկայացնում են գործի հանգամանքների վերաբերյալ փաստարկներ: Վկաները և դատարանի կողմից նշանակված անկախ փորձագետը կարող են լսվել և հարցաքննվել բանավոր լուծման ժամանակ:

23 Գործի քննության հետաձգումը. գործի քննությունը հետաձգվում է, եթե կողմերից մեկը կամ երկու կողմերն էլ բանավոր լուծման կամ դատական բանավոր քննությանը նախապատրաստվելու նպատակով դիմում և հետաձգում են քննությունը, որից հետո նշանակվում է լրացուցիչ կամ հետագա դատական քննության կամ լուծման օր:

24 Վերջնական փաստարկների ներկայացման կարգը. դատավորը սահմանում է վերջնական փաստական հանգամանքների և իրավական փաստարկների ներկայացման վերջնաժամկետ:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ

* **Վերջնական փաստարկներ.** կողմերը բանավոր կամ գրավոր փաստաթղթով դատարան են ներկայացնում վերջնական փաստական հանգամանքներ և իրավական փաստարկներ:

25 Վճռի կայացման ամսաթիվը. դատավորը սահմանում է վճռի կայացման ամսաթիվը:

26 Դատարանում վճռի կայացման վերաբերյալ տեղեկացնելը. կողմերը դատական լուծման ժամանակ տեղեկացվում են վճռի կայացման մասին:

27 Վճռի գրավոր օրինակի պատրաստումը. դատավորը պատրաստում է վճռի գրավոր օրինակը:

28 Վճռի գրանցումը. դատարանի գրասենյակը գրանցում է վճիռը դրա գրավոր օրինակը ստանալուց հետո:

- 29** **Գրավոր վճռի առկայության վերաբերյալ դատարանի կողմից տեղեկացնելը.** դատարանը տեղեկացնում է կողմերին, որ գրավոր վճիռը գտնվում է դատարանի գրասենյակում:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 30** **Գրավոր վճռի օրինակի ստանալը հայցվորի կողմից.** հայցվորն ստանում է գրավոր վճռի օրինակը: *Ըստ ՀՀ քաղ. դատ. օրենսգրքի 124-րդ հոդվածի՝ հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց: Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացած չի նելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:*
- 31** **Պատասխանողին վճռի մասին տեղեկացնելը.** հայցվորը կամ դատարանը պաշտոնապես տեղեկացնում են պատասխանողին կայացված վճռի մասին: Վճիռը կարող է բողոքարկվել պատասխանողի կողմից այն պաշտոնապես ստանալուց հետո (տե՛ս նախորդ կետի վերաբերյալ դիտողությունը):
- 32** **Բողոքարկման ժամկետը.** պատասխանողը, օրենքով սահմանված կարգով, հնարավորություն ունի բողոքարկելու վճիռն օրենքով սահմանված ժամկետում: Պատասխանողը որոշում է չբողոքարկել: Վճիռը դառնում է վերջնական բողոքարկման ժամկետի ավարտից հետո:
- 33** **Պատասխանողի կողմից հայցվորի դատական ծախսերի փոխհատուցումը.** վճիռը պարտավորեցնում է պատասխանողին փոխհատուցել հայցվորի կողմից կատարված դատական ծախսերը, քանի որ պատասխանողի դեմ հայցը բավարարվել է:
Նշված գործողությունը չպետք է դիպել որպես առանձին քայլ, քանի որ դատական ծախսերի փոխհատուցումը կատարվում է վճռի կատարման հետ մեկտեղ:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ

ՎՃՌԻ ԿԱՏԱՐՈՒՄ

- 34** **Հայցվորի հարկադիր կատարումն ապահովող դատարանի աշխատակցին կամ կարգադրիչին (մասնավոր) դիմելը վճռի կատարումն ապահովելու համար.** վճռի կատարումն ապահովելու համար հայցվորը դիմում է հարկադիր կատարումն ապահովող դատական կարգադրիչին կամ շերիֆին կամ մասնավոր կարգադրիչին:
- * **Հայցվորի կողմից կատարողական թերթ ստանալու համար դիմելը.** հայցվորը դիմում է դատարան՝ կատարողական թերթ ստանալու համար (վճռի վրա «կնիք»):
- 35** **Հայցվորի կողմից կատարողական թերթ տալու դիմումների համար տուրք վճարելը.** հայցվորը տուրք է վճարում վճռի հարկադիր կատարումն ապահովելու համար:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 36** **Կատարողական թերթիկի կցումը վճռին.** դատավորը կատարողական թերթիկը («կնքված») կցում է վճռին:
- * **Կատարողական թերթիկի տրամադրումը.** դատարանը կատարողական թերթիկը տրամադրում է հարկադիր կատարումն ապահովող աշխատակցին կամ կարգադրիչին (մասնավոր) :
- 37** **Դատավորի հրահանգը հարկադիր կատարումն ապահովելու վերաբերյալ.** դատավորը հրահանգում է ոստիկանությանը աջակցություն ցուցաբերել պատասխանողի շարժական գույքի նկատմամբ հարկադիր կատարումն ապահովելու համար:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 38** **Պատասխանողից վճռի կամովին կատարումը պահանջելը.** հայցվորը, հարկադիր կատարումն ապահովող դատարանի աշխատակիցը կամ կարգադրիչը (մասնավոր) պահանջում են պատասխանողից, որ նա կամովին կատարի վճիռը՝ պատասխանողին տալով վերջին հնարավորությունը վճիռը կամովին կատարելու համար:
- 39** **Դատարանի աշխատակցի կամ պատասխանողի կողմից բռնագանձվող ակտիվների որոշում.** դատավորը, հարկադիր կատարումն ապահովող դատարանի աշխատակիցը, կարգադրիչը (մասնավոր) կամ պատասխանողն անձամբ որոշում են բռնագանձման ենթակա պատասխանողի շարժական գույքը:
- 40** **Բռնագանձման համար որոշված ակտիվների ընտրության բողոքարկումը.** կողմը՝ հայցվորը կամ պատասխանողը, ով չի մասնակցել բռնագանձվող ակտիվների որոշմանը, բողոքարկում է բռնագանձման համար որոշված ակտիվների վերաբերյալ:
(Նշված գործողությունն առանձին գործընթաց է և նախատեսված չի եղել այն տիպային խնդրի մեջ, որով կատարվել է գործողությունների հաշվարկը):

- 41 **Բռնագանձման ծանուցում.** հարկադիր կատարումն ապահովող դատարանը կամ կարգադրիչը (մասնավոր) ծանուցում են այլ պարտատերերին պատասխանողի ապրանքները բռնագանձելու նպատակ ունենալու մասին:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 42 **Բռնագանձում.** պատասխանողի շարժական գույքը բռնագանձվում է (առգրավում կամ գույքագրում, ակտիվների դրոշմավորում կամ առանձնացում):
- 43 **Բռնագանձումն իրականացնելու մասին հաշվետվություն.** հարկադիր կատարումն ապահովող դատարանի աշխատակիցը կամ մասնավոր կերպով ընթացակարգը ապահովող ծառայողը դատավորին ներկայացնում են հաշվետվություն պատասխանողի շարժական գույքը բռնագանձելու վերաբերյալ:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 44 **Բռնագանձված շարժական ապրանքների գնահատումը.** դատարանը կամ դատարանի կողմից նշանակված փորձագետը գնահատում են բռնագանձված ապրանքները:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 45 **Դատարանում հարկադիր կատարման մասին վեճերը.** վճռի կատարումը հետաձգվում է, որովհետև պատասխանողը կատարման ընթացակարգի վերաբերյալ բողոք է ներկայացնում դատավորին:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 46 **Հանրային աճուրդ հայտարարելը.** դատավորը հանրային աճուրդ է հայտարարում, օրինակ՝ անսագրերում այն գովազդելու կամ հրապարակելու միջոցով:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
- 47 **Հանրային աճուրդի միջոցով վաճառք.** պատասխանողի շարժական գույքը վաճառվում է հանրային աճուրդի ժամանակ:
- 48 **Եկամուտների բաշխումը.** հանրային աճուրդից գոյացած եկամուտները բաշխվում են տարբեր պարտատերերի (այդ թվում հայցվորը) միջև առաջնայնության համաձայն:
- 49 **Հարկադիր կատարման համար հայցվորի կողմից վճարված տուրքի փոխհատուցումը.** պատասխանողը հատուցում է հայցվորի կողմից հարկադիր կատարման համար վճարված տուրքերը:
ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ
Հայցվորը հարկադիր կատարման համար պետական տուրք չի վճարում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

2013թ. մայիսի 23-ին, 30-ին և 31-ին կայացած սեմինարների ժամանակ մասնակիցների կողմից հնչեցված առաջարկներ

«Doing Business» ծրագրի կողմից «Պայմանագրերի կատարման ապահովում» ցուցիչի համար մշակված մեթոդաբանության և հարցաշարի համաձայն առաջարկվող ստանդարտ առևտրային վեճի օրինակով իրականացված ուսումնասիրության շրջանակներում կայացել են սեմինար-հանդիպումներ: Սեմինարների ընթացքում մասնակիցները ներկայացրել են մի շարք առաջարկներ, որոնք թվարկված են ստորև:

- ⊙ Դատական պատշաճ ծանուցումներն ապահովելու համար ներդնել էլեկտրոնային ծանուցումների հնարավորություն: Մասնավորապես՝ ի սկզբանե ընկերությունների և տնտեսվարող այլ սուբյեկտների պետական գրանցման փուլում ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից յուրաքանչյուր սուբյեկտի համար, գրանցմանը զուգահեռ, ստեղծվի էլեկտրոնային փոստային արկղ, և դրա հասցեն ու գաղտնաբառը տրամադրվեն տնտեսվարող սուբյեկտին՝ զգուշացնելով, որ այն համարվելու է պետության համար պատշաճ ծանուցման հասցե: Այս կերպ հնարավոր կդառնա ժամանակի ընթացքում ունենալ հազարավոր առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի էլեկտրոնային փոստային արկղերի հասցեները, և դատարանը կկարողանա ավելի հեշտ ապահովել վերջիններիս դատական ծանուցումները:
- ⊙ Ներդնել կողմերի ներկայացուցիչ փաստաբաններին ՀՀ Փաստաբանների պալատում գրանցված իրենց էլեկտրոնային հասցեների միջոցով ծանուցելու իրավունքը, որը կդիտվի ևս որպես կողմի պատշաճ ծանուցում:
- ⊙ Ներդնել մամուլի միջոցով (այդ թվում ինտերնետային համապատասխան խոշոր լրատվական կայքերի միջոցով) դատական ծանուցումներ ապահովելու հնարավորությունը:
- ⊙ Ներդնել դատական ծանուցումների մի մոդել, որը տարածված է Անգլոսաքսոնական իրավունքի համակարգի պետություններում: Այդպիսի ծանուցման դեպքում ծանուցումը ուղարկվում է ոչ թե կողմին, այլ կողմի համաձայնությամբ ընտրված ծանուցման գործակալին, ինչը համարվում է պատշաճ ծանուցում:
- ⊙ Դիտարկել փորձաքննությունների անցկացման համար օրենքով հստակ ժամկետներ սահմանելու հնարավորությունը՝ բացառելու դատավարությունների կասեցումը և անորոշ ժամկետով ձգձգումները:
- ⊙ Դիտարկել կատարողական թերթ տրամադրելու ինստիտուտը օրենքի ուժով վերացնելու հարցը: Դրա արդյունքում դատավարության մասնակիցները լրացուցիչ ժամանակ չեն ծախսի դատարանին դիմելու և կատարողական թերթ ստանալու համար: Առավել ևս, որ կատարողական թերթի մեջ, ըստ էության, ներկայացվում է կայացված դատական ակտից քաղվածք, որտեղ հիմնականում կրկին նշվում են կողմերի տվյալները և կայացված ակտի եզրափակիչ մասով պարտվող կողմի վրա դրված պարտականությունը: Կարելի է սահմանել, որ ԴԱՀԿ ծառայության աշխատողը կարող է մուտք գործել համապատասխան համակարգ և բեռնել կայացված և ուժի մեջ մտած դատական ակտի համապատասխան մասերը՝ հարկադիր կատարումն ապահովելու համար:
- ⊙ ԴԱՀԿ ծառայությունը օրենքի ուժով դուրս բերվի գործադիր իշխանության ենթակայությունից, քանի որ դատական ակտերի հարկադիր կատարման փուլն, ըստ էության, դա քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ է: Ոստի ԴԱՀԿ ծառայությունն էլ չպետք է լինի դատական համակարգից անջատ և գործադիր իշխանության կազմում, այլ պետք է լինի անկախ և դատական համակարգի կազմում՝ որպես դատարաններին սպասարկող պետական կառույց: Դա հնարավորություն կարող է տալ բարձրացնելու դատական ակտերի հարկադիր կատարման վարույթների արդյունավետությունը, օպերատիվությունը և այլն:

